

ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ՓՈԼՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ
(1918 հոկտեմբեր—1919 հունիս)

Սիրիական ազգայնական ղեկավարները համաշխարհային առաջին պատերազմը երկփեղկված դիմավորեցին:

Ազգայնականների մի փոքր խումբ, որը արաբ ժողովրդական խավերի վրա զգալի ազդեցություն ուներ և որին գլխավորում էին Աբդել Ռահման Շահբենդերը և Մոհամմեդ Քուրդ Ալին, երկընչելով Անգլիայի և Ֆրանսիայի գաղութարարական մտադրություններին և բարեմտորեն հավատալով հաղթանակի դեպքում արաբներին լայն ինքնավարություն տալու երիտթուրքական խոստումներին, ջանում էր սիրիացիներին կողմնորոշել դեպի Անտանտի դեմ հայտարարված «սրբազան պատերազմը»¹:

Ազգայնականների մյուս խումբը, որի մեջ մտնում էր հատկապես «ալ-Ահդ» կազմակերպության շուրջ խմբված սպայական և մտավորական դասը, հետապնդում էր զինված ապստամբություն արաբական լիակատար անկախությունը նվաճելու ծրագիրը:

1915 թ. գարնանը, երբ թուրքական բազմատեսակ բռնամիջոցների ներգործությամբ սիրիական ժողովրդի մեծամասնությունը ավելի ու ավելի էր հակվում դեպի «Ահդականների» ճակատը, Դամասկոս ժամանեց Հիջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալի ալ-Հաշիմիի որդի Ֆեյսալը:

Բրիտանական գործակալները ավելի քան մեկ տարի էր, ինչ շոշափում էին Հուսեյնի տրամադրությունները և Բարձրագույն Դռան հետ նրա փոխհարաբերությունների լարվածության հետ հույսեր կապելով՝ ջանում էին նրան զինված ապստամբության

¹ В. Б. Луцкиѣ, Новая история арабских стран, М., 1966, стр. 326.

մղել: Հիշագրի կառավարիչը, սակայն, վճռական քայլերի դիմելուց առաջ ցանկանում էր ոչ միայն երաշխիքներ ստանալ Անգլիայից, այլև որդու միջոցով ստուգել սիրիական ազգայնականների տրամադրությունները:

«Ահդականները», որոնց հետ գազանորեն շփվեց Ֆեյսալը, 1915 թ. մայիսին կազմեցին «Դամասկոսի արձանագրություն» կոչվող պատմությանը հայտնի մի փաստաթուղթ, որի հիմնական բովանդակությունը հետևյալն էր.

1. Պետք է ստեղծվի արաբական թերակղզին (ի բաց առյալ Ադենը), Հորդանանը, Պաղեստինը, Իրաքը, Լիբանանն ու Սիրիան միավորող արաբական մի պետություն:

2. Անգլիան պետք է ճանաչի և երաշխավորի նորաստեղծ պետության անկախությունը, հրաժարվելով նաև կապիտուլյացիաներից:

3. Այդ դեպքում արաբական պետությունը Անգլիայի հետ կկնքի սլաշտպանական դաշինք և նրան 15 տարով կտրամադրի տնտեսական առանձնաշնորհումներ:

«Արձանագրությունը» Ֆեյսալին հանձնելով, սիրիական ազգայնականները խորհուրդ տվեցին, որ Հուսեյն իբն Ալին այն Անգլիային ներկայացնի որպես Թուրքիայի դեմ համաարաբական ապստամբության նախապայման²:

Հիշագրի կառավարիչը «Արձանագրության» շուրջ բանակցությունների մեջ մտավ Եգիպտոսում Անգլիայի գլխավոր կոմիսար Մակ-Մահոնի հետ: «Հուսեյն—Մակ-Մահոն նամակագրություն» անվամբ հայտնի բանակցությունները³ (1915 թ. հուլիսի 14—1916 թ. հունվարի 30) ավարտվեցին ոչ հոգուտ արաբների, քանի որ հաշիմյան ֆեոդալական վերնախավը՝ իր իսկ մականի ներքո արաբական նոր խալիֆայություն ստեղծելու հեռանկարից հարբած, զգալի զիջումներ կատարեց անգլիացիներին:

«Արձանագրությամբ» արաբական պետության հյուսիսային սահման էր ճշտորոշված 37-րդ զուգահեռականը, այլ խոսքով

² Ն. Հովհաննիսյան, Հոկտեմբերը և ազգային-ազատագրական շարժման վերելքը արաբական Արևելքում—«Վ. Ի. Լենինը և Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը», Երևան, 1969, էջ 49—50:

³ Իր առաջին նամակում, փաստորեն շարադրելով «Դամասկոսի արձանագրությունը», Հուսեյնը լուրջ մի պահանջ էր ավելացնում՝ ճանաչել արաբական խալիֆայությունը: Փոխանակված նամակները տե՛ս G. Antonius, The Arab Awakening, London, 1945, pp. 414—427.

արաբական ստեղծելի պետության մեջ էին մանկու ծովափնյա Կիլիկիան, հարավային Հայաստանի ու հյուսիս-արևմտյան Քրդ-դրստանի մի մասը: Մակ-Մահունի հետ կնքված համաձայնագրով այդ երկրամասերի վրա ամեն հավակնությունից Հուսեյնի հրաժարվելը եթե ըստ էության դեռ արաբական իրավունքներից զիջում չէր, ապա Հալեպ—Համա—Հոմա—Դամասկոս ուղղահայացից արևմուտք ամբողջ տարածությունը (ներառյալ հյուսիսում Ալեքսանդրիան) հոգուտ Ֆրանսիայի արաբական պետության կազմից դուրս թողնելը և Բաղդադի ու Բասրայի վիլայեթներում Անգլիայի հատուկ վարչության հետ հաշտվելը արաբների համազգային շահերի լուրջ ոտնահարումն էր պարզապես:

Հուսեյն իրն Ալին բնականաբար չէր կարող կռահել, որ Անդրլիան մի կողմից Մակ-Մահունի միջոցով իր հետ բանակցելով, մյուս կողմից և գրեթե միաժամանակ՝ սկզբում արտաքին գործերի մինիստրի տեղակալ Արթուր Նիկոլսոնի, իսկ այնուհետև արևելյան հարցերի գծով փորձագետ Մարկ Սայքսի միջոցով բանակցում էր Բելրուսում Ֆրանսիական գլխավոր հյուպատոս Ֆրանսուա Ժորժ Պիկոյի հետ (1915 թ. նոյեմբերի 23—1916 թ. փետրվար) և նախապատրաստում Անտանտի երկրների միջև Օսմանյան կայսրության ասիական նահանգների բաժանման շարաննգ մի ծրագիր: «Սայքս—Պիկոյի համաձայնագիր» անվամբ պատմությանը հայտնի այդ գործարքով Ֆրանսիայի ուղղակի տիրապետության տակ էին դրվելու Լիբանանը, Արևմտյան Սիրիան, Կիլիկիան և Հարավ-արևելյան Անատոլիան (Կապուլտ գոտի), իսկ Արևելյան Սիրիան և Մոսուլի վիլայեթը (Ա գոտի) ենթարկվելու էին ֆրանսիական ազդեցության: Անգլիան իր ուղղակի տիրապետության ներքո էր վերցնելու Կենտրոնական և հարավային Իրաքը, Պաղեստինում Հայֆա և Աքքա նավահանգիստները (Կարմիր գոտի), իսկ իր ազդեցությանն էր ենթարկելու Անդրհորգանան ու Բաղդադի վիլայեթի հյուսիսային մասը (Բ գոտի):⁴

⁴ 1916 թ. մայիսին ցարական Ռուսաստանը միացավ Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքված զաղութարարական գործարքին, որին ապա հարեց նաև Իտալիան: Ռուսաստանը ձեռք էր բերելու Արևմտյան Հայաստանն ու Հյուսիսային Քրդստանը (Դեղին գոտի) և իրավունքներ՝ Կոստանդնուպոլսի ու նեղուցների վրա, ինչպես նաև Պաղեստինում ուղղափառներին պաշտպանելու հարցում: Իտալիայի ուղղակի տիրապետությանն էր անցնելու Հարավ-արևմտյան Անատոլիան (Կանաչ գոտի), իսկ արևմտյան և կենտրոնական Անատոլիան (Գ. գոտի) ենթարկվելու էր խտական ազդեցությանը: Պաղեստինը առանց Աքքայի և Հայֆայի (Սրճագույն

Անաանտի երկրների միջև կնքված իմպերիալիստական գործարքից անտեղյակ, Հուսեյն իրն Ալին 1916 թ. հունիսի 5-ին արաբների անկախությունը հայտարարելով՝ զինված ապստամբություն շղթայազերծեց Թուրքիայի դեմ: Նույն թվի նոյեմբերի 2-ին, երբ հաշիմյան իշխանազուհներ Ալիի, Աբդալլահի, Ֆեյսալի և Զեյդի զինվորները արդեն իսկ ադատագրել էին Զիդդան, Յանբուն, Ում Լեյլը, Մեքքան, Թաիֆը, Ասիրն ու Եմենը, ֆեոդալական վերնախավը Հուսեյնին հռչակեց «արաբ ազգի թագավոր»: Անգլիան, որ ցանկանում էր Հուսեյն ալ-Հաշիմիի զինված շարժումը արաբական թերակղզուց դուրս ծավալված տեսնել՝ առանց սակայն հաշիմյանների ղեկավար դերի, Ֆրանսիայի հետ համախորհուրդ Մեքքայի շերիֆին հարկադրեց բավարարվել «Հիջազի թագավոր» տիտղոսով:

1917 թ. առաջին կեսին Իրաքում և Սիրիայի թերակղզում հարերարար հեշտ հաղթանակներից հետո՝ բրիտանական զորքերը Գաղայի և Բիրջաբայի միջև բախվեցին թուրքական «Յըլզորում» բանակի հարվածային ուժերի և գերմանական գնդերի ամուր պատնեշին: Անգլիան հարկադրվեց սիրիա-պաղեստինյան ռազմա-նական մատուցները բացել ինչպես էմիր Ֆեյսալի ասպախըմրերի, այնպես էլ ֆրանսիական դրոշի ներքո կազմավորված Արեւելյան լեգեոնի հայ և արաբ կամավորների առաջ⁵:

Արաբ և հայ զինական ուժերը, բարեմտորեն հավատալով դաշնակիցների՝ արաբական և հայկական «անկախության երաշխիքների» ստուգույանը, 1917-ի երկրորդ կեսից զգալի ծառայություն մատուցեցին Պաղեստինի և Սիրիայի ռազմաբեմերում գերմանա-թուրքական զորքերի դեմ տարած հաղթանակներին⁶, որոնց եզրահանգումը հանդիսացան 1918 թ. սեպտեմբերի 30-ին Ֆեյսալի զինվորների կողմից Դամասկոսի, իսկ հոկտեմբերի 6-ին՝ հայկական Յ-րդ գումարտակի մասնակցությամբ Բեյրութի ազատագրումը:

Դամասկոսի և Բեյրութի ազատագրումը, եթե մի կողմից նշանավորում էր Սիրիայում և Լիբանանում օսմանյան դարավոր

գոտի) պիտի դառնար միջազգային: Համաձայնագիրը տե՛ս „Documents on British Foreign Policy, 1919—1930“, First ser., vol. IV, London, 1947, pp. 241—247.

⁵ Լեգեոնի շարքերում կային մոտ 4000 հայեր և 1000 արաբներ (սկավառագրեր, Գահիրե, 1927, էջ 36): Հայկական գումարտակների կազմության և գործունեության մասին տե՛ս Տ. Պոլյանց, Հայկական լեգեոնը, Ութըրթաուն, 1965:

⁶ «Հայ ձայն», Հալեպ, 19.11.1918 թ.:

տիրապետության վախճանը, ապա մյուս կողմից արաբների համար սկզբնավորում էր պայքարի մի նոր և նույնքան փոթորկահույզ հանգրվան, որը նոր իրադրության մեջ դասավորելու էր հայարաբական նոր փոխհարաբերությունները:

* * *

Արաբ աշխարհագրոյախններին առաջնորդող հաշիմական իշխանազունները 1918 թ. ապրիլ ամսին իրենց հոր ինքնագրով ու կնիքով պատգամ էին ստացել՝ «հանուն Ղուրանի ամեն տեսակ օգնություն ընձեռել» տարագրված հայերին, պաշտպանել նրանց՝ «ինչպես որ պիտի պաշտպանեիք ձեր իսկ անձն ու ինչքը և ձեր իսկ հարազատներին»⁷:

Արաբական թերակղզում թուրքական կայազորների հետ իրենց հաշիվները հիմնականում մաքրելուց հետո՝ Ֆեյսալ իբն Հուսեյնի գլխավորությամբ դեպի հյուսիս շարժվող ապստամբները սրբության մեջ էին կատարում իրենց վեհապետի հրահանգը, և հնարավոր ամեն ինչ անում՝ հայկական խլյակներին մահվան ճիրաններից փրկելու համար:

«Մեր դաշնակցի՝ Հիջազի թագավորի քաջարի զինվորները,— վկայում էր Հայ ազգային պատվիրակության նախաձեռնությամբ և հայասեր ֆրանսիացիների օժանդակությամբ Փարիզում լույս ընծայվող «Լա վուա դը լ'Արմենի» («Հայաստանի ձայն») երկշաբաթաթերթը,— Հարավային Սիրիայում և Պաղեստինում իրենց հաղթական առաջխաղացքի ժամանակ ազատագրել են տեղահանված բազմահարյուր դժբախտ հայերի, և արտակարգ հոգատարությամբ նրանց խնամելուց հետո՝ ուղարկել են Եգիպտոս»⁸:

Արձանագրված փաստն, անշուշտ, եզակի չէր բնավ, և Փարիզի Հայ ազգային պատվիրակության⁹ նախագահ Պողոս Նուպար փաշան հարկ էր համարում շնորհակալական հատուկ հեռագիր ուղար-

⁷ Հուսեյն թագավորի նամակի բնագիրը տե՛ս

عثمان انتوت. من تاريخ الامة الازمنية، ج ١، ص ١٩٦. Պուլիս, 24.4.1951 թ., իսկ հայերեն թարգմանությունը՝ «Ժամանակ», Գուլիս, 24.4.1951 թ.:

⁸ «La Voix de l'Arménie», Paris, 1^{re} année No. 11, 1. VI. 1918, pp. 362—363.

⁹ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Փարիզում արևմտահայ բուրժուազիայի նախաձեռնությամբ ստեղծված «Պատվիրակությունը» հույս ուներ Անտանտայի երկրների հաղթանակի դեպքում պաշտպանել արևմտահայության շահերը և ապահովել նրա իրավունքները:

կել արաբ զորահրամանատար էմիր Ֆեյսալին: Որդուց տեղեկանալով հայերի երախտագիտական զգացմունքների մասին, Հիշազի արքան. հավաստելուց հետո, որ ինքր թուրքերի դեմ պատերազմ է հայտարարել ռուս միայն արարներուն, այլև հայ ազգին համար ալ¹⁰, անձամբ հայազգի փաշային հասցեագրված իր պատասխանում ընդգծում էր. «...օգնություն հասցնելով ճնշվածներին, էմիր Ֆեյսալը պարզապես մեր կրոնի և արաբների հավատքի հիմնական պատվերներից մեկն է կատարել: Վստահությամբ և հպարտությամբ եմ հայտարարում, որ հայ ժողովուրդն ու նույն վիճակի մեջ գտնվող մյուս ժողովուրդները մեր դաշնակիցներն են՝ ինչպես լավ, այնպես էլ վատ օրերի համար»¹¹:

Հուսեյնի և նրա որդիների (առաջին հերթին՝ Ֆեյսալի) ու համախոհների¹² կողմից հայերին պաշտպանելու հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ ի դեմս հայերի նրանք տեսնում էին դաշնակիցների, ընդհանուր թշնամու՝ թուրքական բռնապետության դեմ մղվող պայքարում: Հավանաբար, հայերի նկատմամբ Ֆեյսալի բարյացակամ վերաբերմունքի մեջ իր դերն է խաղացել նաև այն հանգամանքը, որ մանուկ հասակում, երբ նա հոր հետ, Աբդուլ Համիդի կարգադրությամբ, Պոլսում գտնվում էր աքսորյալի վիճակում, նրա վրա ցնցող տպավորություն էին գործել 90-ական թվականների հայկական կոտորածները, որոնց ասպարեզ հանդիսացան նաև տուլթանական մայրաքաղաքի փողոցները: Ֆեյսալի կենսագիր էրսկինը, ընդգծելով իր հերոսի հոգու վրա անջնջելի դրոշմ թողած իրադարձությունների պատկերումը, նշում է, որ մոր մահից հետո հայրը որպես մայրագիր Ֆեյսալին բերել էր իր ազատախոհ և հայասիրական հայացքներով հռչակված զորահրամանատար Ֆուադ փաշայի նույնքան ազատախոհ և հայասեր թոռնուհուն: Վերջինիս հաճախ այցի եկող հայրն ու պապը չէին կարող իրենց փեսայի հետ չբացել զայրալիր խոսք ու դրույց Օսմանյան կայսրության վիճակի և հայկական հարստահարու-

¹⁰ «Հայ ձայն», 29.11.1918 թ.:

¹¹ «La Voix de l'Arménie», l'année No. 11, pp. 362—363.

¹² Հիշազի գահակալ Հուսեյնի և նրա թագալիր որդիների՝ Սիրիայի, հետագայում Իրաքի թագավոր Ֆեյսալի և Անդրհորդանանի գահակալ Արզալահի կապերը միշտ էլ սերտ են եղել հայության հետ: Նրանք 20-ական տասնամյակի երկրորդ կեսից աշխատել են շրջապատվել հայ շնորհալի գործիչներով: Արզալահը նույնիսկ մտորել է Սովետական Հայաստանում հյուպատոսություն ունենալու շուրջը:

թյունների մասին, որոնց ունկնդիր էր լինում դյուրահույզ Ֆեյսալը: Կենսագիրը ընդգծում է, որ 1895 թ. սեպտեմբերին, երբ օսմանյան յաթաղանը նորից էր գործի անցել, Ֆուադ փաշան՝ որպես Կադիզյոյի շրջանի զինվորական կառավարիչ, տեղական իշխանություններին ամենայն խստությամբ կարգադրել էր ձեռնպահ մնալ հակահայ բռնություններից: «Շատ ու շատ հայերի կյանքը փրկած այդ հրահանգից հետո, — դրվագը եզրափակում է էրսկինը, — թուրք զորապետն ու իր որդիները Յըլդըզի պալատում որջացած Համիդի աչքից ընկան ու նույնիսկ հետագայում նրանց կյանքը հաճախ վտանգների ենթարկվեց»¹³:

Պատանեկան տարիներն անցկացնելով պոլսական մթնոլորտում, որ ինչպես Ֆուադ փաշայի և շերիֆ Հուսեյնի, այնպես էլ իր համար «լիքն էր վտանգներով և անորոշությամբ» ու «դրվանագիտության նախագիտելիքները ձեռք բերելով իրեն շրջապատող հանգամանքներից», Ֆեյսալը երիտթուրքական հեղաշրջումից հետո հայերի հետ իր հարաբերությունները էլ ավելի խորացնելու առիթ ձեռք բերեց օսմանյան պառլամենտում, որտեղ նա, եղբւր՝ Աբդալլահի հետ ներկայացնում էր արաբական թերակղզու Ջիզա և Մեքքա բնակավայրերը¹⁴, Եվ մինչ ավագ եղբայրը իր ծայրահեղ հակումներով ավելի շատ էր առնչակցվում արկածախնդրությունների մեջ փակ աչքերով նետվող հայ գործիչների հետ, Ֆեյսալը հակվում էր կայսրության շրջանակներում բարենորոգչական ակրնկալություններ հետապնդող մտավորականների կողմը: Տեղին կլինի ասել, որ Ֆեյսալի գաղափարակիցների տեսակետներն էին, որ հաղթանակեցին 1913 թ. հունիսին, Փարիզի Արաբական կոնգրեսում, որի ընդունած բանաձևի 8-րդ կետը «իր համակրանքն էր հասցեագրում թուրքահայերի բարենորոգչական պահանջներին»¹⁵, փոխադարձաբար արժանանալով օսմանյան պառլամենտի հայ երեսփոխանների համակրանքին¹⁶:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մի կողմից Ջեմալի հակաարաբական ոճիրների ազդեցության ներքո և

¹³ S. Erskine, King Faisal of Iraq (An authorised and authentic study), London, 1933, pp. 25—27.

¹⁴ Նույն տեղում, էջ 26, 30:

¹⁵ Z. N. Zenine, Arab-Turkish Relations and the Emergence of Arab Nationalism, Beirut, 1958, pp. 135—136.

¹⁶ Հ. Աղաջյան, Արաբական ազգային-ազատագրական զարթոնքը. Պեյրուս, 1959, էջ 14:

մյուս կողմից Հաշիմյան ֆեոդալական տան՝ դեպի հյուսիսի արաբական երկրամասերը ծավալվելու հեռանկարի դրդմամբ, Ֆեյսալի բարենորոգչական ակնկալությունները աստիճանաբար փոխակերպվեցին ուժեղ հավատքի, որ միայն զենքի ուժով Օսմանյան կայսրության խորտակմանը նպաստելով կարելի կլինի հասնել թե՛ արաբների ազգային իղձերի իրականացմանը և թե՛ սեփական տոհմի փառասիրական եռանդի հագեցմանը:

Եվ այժմ, երբ պատերազմն ավարտվել էր հաղթանակով, Ֆեյսալը մտորում էր միայն ու միայն արաբների ազգային անկախությունը հաշիմյանների գլխավորությամբ երազանքից իրականություն դարձնելու ուղիների շուրջ, որոնց հանգուցվող, թեկուզ դեռ տարտամ, մի արահետ նա նշմարում էր Սիրիայում հայ գաղթականների բաղմահազարանոց զանգվածի առկայության փաստի մեջ:

Նշենք, որ Ֆեյսալը իր անմիջական գործակիցների շարքում ուներ իրենց հայասիրությունը չթաքցնող մի շարք ազդեցիկ դեմքեր, որոնք ոչ միայն ջանում էին հայ տարագիրների նկատմամբ արար ժողովրդական խավերի վերաբերմունքը էլ ավելի հստակացնել ու չեղմացնել, այլև իրենց ղեկավարի նման փայփայում էին հայկական պատկառելի զանգվածը արաբական ազգային ձրգտումներին հենարան դարձնելու ծրագրեր: Նրանց թվում էին Ֆեյսալի մերձավորագույն խորհրդականները՝ կրթական նախարար Սատեղ ալ-Հուսրին (որ միշտ եղել էր թուրքական լուծը թոթափելու համար հայ-արաբական համագործակցության շատագուժներից)¹⁷ և սիրիական թագի հավակնորդի անձնական քարտուղար, «Ջարդերը Հայաստանում» հանրահայտ գրքի հեղինակ իրավաբան Ֆայեղ ալ-Ղոսեյնը: Նրանց թվում էին Հալեպի շրջանի կառավարիչ նշանակված Շուքրի ալ-Այուբին (Մագրիբյոյի նախկին կառավարիչը, որ Պոլսում օսմանյան բանկի դեպքի օրերին շատ հայերի կյանքն էր փրկել)¹⁸ և Դամասկոսում ղգալի հեղինակություն վայելող քաղաքական գործիչ Հաշեմ ալ-Աթասին (որ մինչ պատերազմը Հաշեմի գալմաղամի և պատերազմի տարիներին Պուրտուրի մութասարիֆի պաշտոններում հաճախ էր դեմընթաց գնացել հակահայկական բռնամիջոցներ հուշող երիտթուրքական կարգադրու-

¹⁷ Բավական է վկայակոչել նրա աշխատություններից մեկը՝ «ساطع الحمصى، البلاد العربية والدولة العثمانية، بيروت، ١٩٦٠»

¹⁸ Մայ Ժայն», 30.12.1918 թ.:

թյուններին)։ Նրանց թվում էր նաև դեռ երիտասարդ, բազմաշնորհ Օմար Ֆախուրին, լիբանանյան նոր դրականության ապագա հիմնադիրը, որ Ֆեյսալի կողմից «ալ-Ասիմա» պաշտոնաթերթի խմբագրման համար Բեյրութից հրավիրվելով Դամասկոս, այդ և ուրիշ թերթերում (հատկապես «ալ-Հակիկա»-յի էջերում) հաճախ է հանդես եկել «Դեմոկրատ իսլամ» ծածկանունով՝ հայ գաղթականությանը սրտապնդելու և արաբների նկատմամբ հայության բարեկամությունը խորացնելու քարոզով։

Սիրիական ազգային շարժման այդ ղեկավարները չէին անգիտանում անշուշտ հավանականությունը այն անպայման կարևոր նպաստին, որ հայ նորաբնակները կարող էին բերել երկրի առաջիկա վերելքին, միավորելով իրենց ճիգերն ու եռանդը հնաբնակ իրենց ազգակիցների գրաված կարևոր դիրքերին։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ վերջիններս Սիրիայի մի շարք բնակավայրերի կյանքի որոշ ասպարեզներում իրոք որ նկատելի կշիռ էին ներկայացնում։ «Արևելյան տարեգրքի» ոչ ամբողջական, բայց հավաստի տվյալներով, առաջին աշխարհամարտի ավարտին արտաքին առևտրի հետ առնչվող սիրիական բազմաթիվ գործատուներ ու վաճառատներ հայերին էին պատկանում։ Հալեպի մեքենաշինական, մետաղագործական, կաշվի ու կոշիկի, ակնեղենի, կերպասեղենի ու հանդերձավորման, հյուրանոցային, ժամագործական և այլ ձեռնարկությունների 20—50 տոկոսի սեփականատերերը հայեր էին։ Ավելի նշանակալից էր հայ տարրի տեղը մի շարք այնպիսի կենսական առարկաներում, ինչպիսին, օրինակ, առողջապահությունն էր։ Ոչ միայն Հալեպում (մինչև օսմանյան մայրաքաղաք իրենց համբավը հասցրած հալեպցի 11 բժիշկներից 5-ը, 5 ատամնաբույժներից 3-ը և 6 դեղագործներից 2-ը հայ էին), այլև Դամասկոսում, Լաթաքիայում, Դեյր էզ-Ջորում, Ջերլեում և այլուր քիչ թե շատ հուշակված բժիշկները, ատամնաբույժները և դեղագործները աննշան բացառությամբ հայեր էին։ Վերջիններիս ձեռքումն էին կենտրոնացված, նույնպես, ճարտարապետության և ինժեներա-կապալառուական ասպարեզները, լուսանկարչությունն ու գեղարվեստական բացիկների արտադրությունը, երաժշտական գործիքների, նվագարանների և ձայնապնակների առևտուրը և մասամբ նույնիսկ ոգելից խմիչքների արտադրությունը¹⁹։

¹⁹ „Annuaire Oriental, 1923“, éd.-prop. A. Rizo, Constantinople, 1923, pp. 1535-1560.

Ֆեյսալի շուրջ խմբված սիրիական քաղաքական գործիչների և մտավորականների խումբը հասկանալիորեն պետք է ջանար իր ադդեցություն ունենալ ներքաշել հայ գաղթականության վրա ալա կամ այն չափով ներգործություն ունեցող հայ գործիչներին և մտավորականներին, նրանց միջոցով հայ-արաբական մերձեցման իր ծրագրերը իրականություն դարձնելու նպատակով:

Այս տեսակետից բնութագրական է ղինադադարից հետո Հալեպում լույս ընծայված «Հայ ձայն» թերթի հրատարակության պարագան:

1918 թ. աշնանը կիլիկիահայ մտավորականների շրջանում ծագել էր թերթ հրատարակելու գաղափարը, սակայն բրիտանական զինվորական իշխանությունները վարանում էին արտոնություն տալ: Ասելով, որ թերթի հիմնական առաջադրանքներից մեկն է լի-նելու «հրապարակավ հայ ժողովրդին երախտագիտությունը հայտ-նել արաբ ազգին բարեկամական պաշտպանությունը», Հալեպի ղին-վորական կառավարիչ Շուբրի ալ-Այուբին շտապում է ձեռնարկել տալ թույլտվություն²⁰, «հանուն արաբ ազգին» շնորհակալություն է հայանում խմբագրության առաջադրանքի համար և ավելացնում. «Բայց հայտնի է, որ տարագրության շրջանին գտնվեցան նաև արաբ անհատներ, որոնք իրենց պաշտոնին բերումով կամ տգի-տությամբ, շահու կամ ուրիշ շարժառիթներով վնաս հասցուցին հայ անհատներուն: Սակայն վստահ եղեք, որ արաբ ազգը անկեղ-ծորեն բարեկամ եղավ և պիտի ըլլա ձեր դժբախտ ազգին: Հետևա-բար, ամեն անգամ, որ գրիչ ձեռք առնեք՝ արաբներու մասին գրե-լու համար, պետք է որ ազգը աչքի առջև ունենանք, ոչ թե պաշ-տոնյա կամ կուսակցական, տգետ կամ անոթի, փառքի կամ դրա-մի հետամուտ անհատներ»²¹:

Անձամբ Ֆեյսալը, որ ձգտում էր Մերձավոր Արևելքի ոչ միայն արաբներին, այլև Արևմուտքի շահախնդիր հետաքրքրության են-թակա ազգային փոքրամասնություններին իր դատին սիրաշահել, չէր մոռանում երբեք, որ հայրը թելագրել էր հաշվի նստել արա-բական երկրամասերում հայերի ոչ միայն «գաղթականության»

²⁰ «Հայ ձայն» իր անդրանիկ առաջնորդում (9.11.1918) նույնիսկ վկա-յում է, որ Հալեպի պետական գործիչներից շատերը պատրաստակամությամբ են հայտնել աշխատակցություն բերելու թերթին՝ հայ-արաբական բարեկամությունը ամրապնդելու մտադրությամբ:

²¹ «Եփրատ», Հալեպ, 21.5.1930 թ.:

փաստի, այլև մանավանդ «բնակության» հեռանկարի հետ: Եվ երբեք էլ պատահական չէր, որ զինադադարի հռչակման կապակցությամբ նոյեմբերի 11-ին Հալեպում կազմակերպված հանդիսություններն ու իր հրապարակային ծրագրային ճառը նա օգտագործեց մյուս համայնքների հետ նաև հայությունը իր դատին սիրա-

• շահելու համար:

Ֆեյսալը չէր անգիտանում, որ ֆրանսիական գաղութարարները հույսեր էին կապում, ի շարս այլ՝ նաև «հայկական հենարանի» հետ: Բնական է ուրեմն, որ Հալեպում նրան զբաղեցնելու էր արաբներին սպասող դժվարին փորձությունների ժամին հայ գաղթականությունը և քրիստոնյա մյուս համայնքները իր կողքին (կամ առնվազն ոչ ֆրանսիացիների կողքին) ունենալու հնարավորության հարցը ևս:

Իրոք, Անատոլիայի հետ իր հարևանության, դեպի հյուսիս ուղղված իր առևտրա-տնտեսական կենսական կապերի և մերձակա բնակավայրերում թուրքախոս ազգաբնակչության առկայության հետևանքով սորոշակիորեն թուրքասեր» ճանաչված²² Հալեպում է, որ նոյեմբերի 11-ին Ֆեյսալը չվարանեց՝ արաբական երկրներում թուրքական տիրողների ճնշումները թվարկելուց հետո՝ խարանել նաև նրանց խժոժությունները քրիստոնյաների նկատմամբ²³: Նա իր ելույթը ուղղում էր ոչ միայն և ոչ այնքան արաբներին, այլև, և ավելի շուտ, Սիրիայում բնակվող քրիստոնյա համայնքներին, այդ թվում մանավանդ հայ գաղթականներին, որոնց երևելիների մի ստվար խումբ հրավիրված էր հանդիսություններին: Ավելին, Ֆեյսալը հոգ էր տանում անձամբ նախագահելու հայ նորաբնակների ազգային առաջին միջոցառմանը՝ Բ. Կանաչյանի ջանքերով ստեղծված երգչախմբի համերգին, իր ներկայությամբ հրապուրելով տեղի արաբ և օտար երևելիներին, որոնք հանձին տարագիրների՝ ողջունում էին ռաջարի զինվոր և արվեստագետ» հայ ժողովրդին²⁴:

Ֆեյսալի մտավախությունները, Հալեպի իր ելույթից հինգ օր անց՝ նոյեմբերի 16-ին, հիմնավորվել սկսեցին Բեյրութում, իր իսկ

²² Z. N. Zeine, The Struggle for Arab Independence, Beirut, 1960, p. 49. նաև՝ P. du Vélou, Le Désastre d'Alexandrette, 1934—1938, Paris, 1938, p. 76.

²³ Ֆեյսալի ճառի շարադրանքը տե՛ս Զեյն. նշվ. աշխ., էջ 49—50:

²⁴ Ս. Սեզա. Դրվագներ Բ. Կանաչյանի կյանքին, «Նաիրի», Բեյրութ, 1957 թ. № 35, էջ 5 և 15:

աչքերի առջև, հայ-արաբական մի թյուրիմացությամբ, որը արեւմրտյան հեղինակների կողմից հասկանալի բժախնդրությամբ արձանագրվել է իբրև «հայ-իսլամական բախումներ»²⁵ և նույնիսկ ներկայացվել որպես հայկական կոտորածների վրեժխնդրության հետամուտ հայ լեզեոնականների «պատժիչ գործողությունները» իսլամ արաբների նկատմամբ²⁶:

Պատահարն, իրականում, զվարձալի մի թյուրիմացություն էր պարզապես: Հալեպից Տրիպոլիի վրայով Բեյրութ ժամանած Ֆելսալին խանդավառությամբ դիմավորող մի քանի հարյուր իսլամ երիտասարդներ վանկարկում էին մի հին լողունգ. «Լա նարգա իլլա ալ-սուլթան» («Մեզ կառավարելու համար սուլթանից բացի ոչ ոքի չենք ուղում»): Այդ լողունգը թուրքական տիրապետության ժամանակաշրջանում պարտադրվել էր սուլթանի նկատմամբ հավատարմություն արտահայտելու համար²⁷ և տվյալ պահին ուներ այլ՝ հակաֆրանսիական բովանդակություն, պարզ այն պատճառով, որ այն վանկարկողների համար «սուլթանը» ոչ այլ ոք էր, եթե ոչ Ֆելսալի հայրը՝ Հիջազի գահակալ Հուսեյնը²⁸: Սակայն արաբներն չիմացող հայ լեզեոնականները «սուլթան» բառի մեջ տեսնում են թուրքական բռնակալին և հյուսիս-աֆրիկյան գաղութային բանակների շարքերում ծառայած և ուրեմն արաբագետ իրենց ֆրանսիացի սպանների թյուր բացատրություններից բորբոքված, փորձում են սաստել «սուլթանասերներին»՝ «թուրքասերներին»: Վերջիններն էլ, անտեղյակ հայերին վրդովող թյուրիմացությանը, հասկանալիորեն վիրավորում են իրենց ազգային հերոսի դեմ ուղղված «անարգանքից»: Եվ ահա ծայր է առնում փողոցային մի կռիվ, որը բարեբախտաբար ավելի լուրջ արյունահեղության չի հանգում՝ արաբ և հայ ղեկավար գործիչների ջանքերի շնորհիվ:

Պետք է ասել, որ Բեյրութի թյուրիմացությունը չազդեց հայ-արաբական բարեկամական կապերի վրա, ընդհակառակն, էլ ավե-

²⁵ S. H. Longrigg, Syria and Lebanon under French Mandate, London 1958, p. 80.

²⁶ P. du Véou, La Passion de Cilicie, 1919—1922, Paris, 1924, pp. 67—68.

²⁷ Z. N. Zeine, The Struggle for Arab Independence, p. 51.

²⁸ Ազատագրված Դամասկոսում հոկտեմբերի 5-ին առաջին անգամ հրապարակախորհն դիմելով ժողովրդին, Ֆելսալը սիրիացիներին ողջունում էր «Հանուն մեր տեր Սուլթան և Հավատացյալների իշխան՝ շերիֆ Հուսեյնի» (նույն տեղում, էջ 33):

լի ամրապնդեց դրանք այն իմաստով, որ պատճառ դարձավ արաբական ազգային շարժման պարագլուխների և 1918 հոկտեմբերին ստեղծված «Բեյրութի հայ ազգային միության» ղեկավարների միջև շփումների սերտացման²⁹։

Փաստորեն այդ մերձեցումից էր, որ առաջացավ հայկական Կիլիկիայի շահերի տեսանկյունից այնքան կենսական «Հայկական լեզեոնը»։ Իրոք, Բեյրութի դեպքերից երկու օր հետո, Լևոնտի ֆրանսիական ղորահրամանատար գեներալ Համըլի թարգմանն ու խորհրդատուն՝ նավատորմի սպա Տ. Թեքեյանը և գերագույն կոմիսար Ժորժ Պիկոյի մոտ հեղինակություն վայելող լեզեոնական սպա Վ. Փորթուզալյանը պաշտոնական մի գրությամբ իրենց անմիջական վերադասներից պահանջում էին Արևելյան լեզեոնը երկատել, հայկական դնդերը որպես «Հայկական լեզեոն» Կիլիկիա ուղարկել, իսկ արաբականները որպես «Սիրիական լեզեոն» Սիրիայում թողնել³⁰։ Նրանք իրավամբ դիտել էին տալիս, որ հայերի և արաբների «միակցումը մեկ դասավորումի, մեկ խմբավորումի մեջ եղած է անոր համար, որ երկուքն ալ ուզած են թոթափել նույն ուժը։ Այդ պատճառը գոյություն ունենալիս դադրած է»³¹։

Հայ զինական ուժը ղեկավարող գործիչներից անկախ, Սիրիայում կայք հաստատած հայ տարագիրները ես իրավացիորեն պահանջում էին Հայկական լեզեոնը անմիջապես տեղափոխել Կիլիկիա։ Հատկանշական է, որ «ալ-Ահրամ» թերթի թղթակիցը չթաքնելված գոհունակությամբ և մանրամասներով Կահիրե էր հաղորդում նոյեմբերի 24-ին Դամասկոսում բազմահազար հայերի կողմից կազմակերպված միտինգի մասին, որտեղ ժողովրդական ձառախոսների ելույթներում և ներկաների անունից ֆրանսիական դիրտորդ կապիտան Մերսիեի միջոցով Փարիզ ուղարկված հեռագրում պահանջվում էր հայ զինական ուժը շտապ տեղափոխել Կիլիկիա³²։

Հայ զինական ուժը ղեկավարող մարդիկ, անշուշտ, առաջին հերթին հոգում էին հայկական Կիլիկիայի մասին։ Հայկական լեզեոնի տարանջատումը արաբականից, սակայն, միաժամանակ կենսական անհրաժեշտություն էր հայ-արաբական թյուրիմացու-

²⁹ «Ժողովուրդի ձայնը», Պոլիս, 4 և 5.2.1919 թ.։

³⁰ P. du Véou, La Passion de Cilicie, 1919–1922, p. 64.

³¹ Տ. Պոլսեյան, նշվ. աշխ., էջ 175–176։

³² «Ալ-Ահրամ» (الاحرام), Կահիրե, 27.11.1918 թ.։

թյունները կանխարգելելու տեսակետից, այն իմաստով, որ այն նշանալորելու էր հայերի տարանջատումը ոգևորվող արաբական ազդային շարժման նկատմամբ ֆրանսիական մտադրությունների կենսագործումից:

Բանը նրանում էր, որ հոկտեմբերի 6-ին օսմանյան լծից Բեյրութի աղատազրմանը մասնակցած հայկական 3-րդ գումարտակը և հայկական զինական այլ խմբեր, ի խախտումն Սայքսի, Ժորժ Պիկոյի և Պողոս Նուպարի միջև 1916 հոկտեմբերին կնքված լոնդոնյան համաձայնագրի, փոխանակ Կիլիկիա ուղարկվելու, շարունակում էին պահվել Սիրիայում և Լիբանանում, որպես Արևելյան լեգեոնի բաղադրատարր³³: Հետդճետե շիկացող մթնոլորտում, անշուշտ, հայկական զինական ուժը շարանենգ հաշիվներով անհրաժեշտ էր գաղութարարներին, իրողություն, որը հաստատում է Լևանտի ֆրանսիական սպայակույտի պետի տեղակալ Գուդոյի՝ երկամյա ուշացումով արած այն արդարացումը, որ իբր «զտարյուն ֆրանսիական» օգնական գնդերի ժամանման ձգձգումն է միայն ֆրանսիական ղորահրամանատարությանը ստիպել դիմելու «հոգեբանական տեսակետից սխալ» քայլի՝ հայ զինական ուժի օգտագործմանը³⁴: Յույց տալու համար, թե հայ զինական ուժը Սիրիայում ինչքան անհրաժեշտ էր ֆրանսիական գաղութարարներին, նշենք հետևյալ փաստը. Հալեպում Ֆեյսալի ելույթից 3 օր անց և ուրեմն Բեյրութի պատահարից 2 օր ու հայ լեգեոնական ղեկավարների պահանջից 4 օր առաջ, նոյեմբերի 14-ին, «Սիրիայում և Հայաստանում ֆրանսիայի գերագույն կոմիսար» Ժորժ Պիկոն (որ նոյեմբերի 6-ին էր ժամանել Բեյրութ) շտապ հեռագրով Փարիզից պահանջում էր առնվազն 20 000-անոց զորք հասցնել՝ «Սիրիայում Ֆրանսիայի դիրքերը փուլզման վտանգից փրկելու համար...»³⁵:

Հայ աշխարհազորայիներին՝ նորակոչ Հայկական լեգեոնի կազմում 1918 թ. նոյեմբերի վերջերին Կիլիկիա տեղափոխությունը, սակայն, եթե մի կողմից նպաստեց հայ-արաբական թյուրիմացությունների կանխարգելմանը, ապա մյուս կողմից էլ ավելի խուճապի մատնեց թուրք ջարդարարներին: Վերջիններս Պոլսում,

³³ Խ. ԲՃ. Աճեմյան, Հայկական լեգեոնը, «Համազգային տարեգիրք», Բեյրութ, 1953, էջ 73—74: Սայքս—Պիկո—Նուպար համաձայնագրի մասին տե՛ս M. Paillass, Le Kemalisme devant les Alliés, Constantinople—Paris, 1922, pp. 321—323.

³⁴ «La Syrie et le Liban en 1921», Paris, 1921, Paris, 1921, p. 79.

³⁵ E. Brémond, Le Hédjaz dans la Guerre Mondiale, Paris, 1931, p. 308.

«Մյուլդաֆաալի միլլիեի» պաշտոնառանը փութնոսնդուլլամբ հրավիրեցին «Աղանայի թուրքերի կոնգրեսը», որի հիմնական առաջադրանքը իբր լինելու էր պաշտոնական-օրինական ձեռնարկումներով «Աղանայի նահանգի թուրքիո անբաժան մաս կազմելը ապացուցանել»³⁶։ Կոնգրեսը ընտրեց պետական նշանավոր գործիչներից բաղկացած վարիչ մի մարմին, որի գլխին կանգնած էր Մերակույտի նախկին նախագահ Ռիֆաատը³⁷։ Հասկանալի է, որ թուրքիայի համար ճգնաժամային իրադրության իսկ թելադրանքով, կոնգրեսը ոգեշնչողները որոնելու էին ոչ այնքան պաշտոնական-օրինական, որքան ընդհատակյա-անօրինական գործողության մի ծրագիր, որը գործադրության էր դրվելու արաբական երկրներում պահպանվող թուրքական գործակալությունների հակահայկական միջոցառումների աշխուժացման օգնությամբ։

Իսկ այդ գործակալությունները, մանավանդ Սիրիայում, բավականին հզոր թևարկուններ ունեին։

Հարկ է նշել, որ սիրիական ազգայնական ղեկավարների մի մասի հայ-արաբական մերձեցման ու բարեկամության քաղաքականությունը հասկանալիորեն անցանկալի էր Ֆեյսալի շուրջը խմբված մի շարք թրքասեր ազդեցիկ գործիչների համար, որոնց ոգեշնչում էր սիրիական բանակի սպայակույտի պետ Ֆասին ալ-Հաշիմի փաշան։ Վերջինս, ինչպես վկայում էր Կահիրեի բրիտանական ռեզիդենտ գնդապետ Մայներցհազենը իր գաղտնի տեղեկագրերից մեկում, «Ջեմալի բացահայտ հետևորդն էր» և Քեմալի քաջալերանքով ջանում էր «Սիրիայում թուրքական տիրապետությունը վերահաստատել» իր իսկ մականի ներքո³⁸։ Ալ-Հաշիմի անմիջական գործակիցներից հիշատակենք հատկապես թրքասերների խմբակի պարագլուխ Բադի Բեկդաշին, որ «Աղանայի թուրքերի կոնգրեսի» նախագահ Ռիֆաատի փեսան էր և Փարիզի թուրքական նախկին դեսպանի աներձագը³⁹։

Հայ-արաբական բարեկամական քաղաքականությունը առավել ևս անցանկալի էր Սիրիայի և Լիբանանի վարչատնտեսի բարձրագույն օղակներում դեռևս իրենց իշխանությունը պահպանող

³⁶ «Ժողովուրդ», Պոլիս, 26.12.1919 թ.։

³⁷ Նույն տեղում։

³⁸ «Documents on British Foreign Policy, 1919—1930», I ser., vol. IV p. 523.

³⁹ Z. N. Zeine, The Struggle for Arab Independence. p. 147.

Թուրք պաշտոնատարների համար, որոնց զարմանալիորեն հանդուրժում էր զինադադարի նախօրյակին օսմանյան ուսադիրները ըրիտանականով փոխարինած և «օկուպացված արևելյան երկրամասի»⁴⁰ գլխավոր կառավարչի պաշտոնում Դամասկոսի ամենահզոր դեմքը դարձած Ալի Ռիզա Ռիկաբին⁴¹։

Թրքամուլ արար երևելիներն ու նրանց աջակցող թուրք պաշտոնատարները, իրենց «դարաշրջանի» մահազանգը լսելու երկյուղից դրված, մտորում էին թուրք-սիրիական դաշնակցություն (ֆեդերացիա) ստեղծելու ուղիների շուրջ⁴²։ Ինչ վերաբերում է նրանց ոգեշնչող ու ղեկավարող թուրք դահապետներին, ապա վերջիններս հետապնդում էին ավելի «համեստ», բայց շատ գործնական շարաններ մի ծրագիր—Ֆրանսիացիների կողմից Սիրիայի հյուսիսում ստեղծված «ռազմական գոտու» («Confins militaires») թիկունքում՝ Հալեպում, Դեյր էշ-Ջորում, Սվեդիայում, Լաթաքիայում և մյուս բնակավայրերում ամեն գնով խռովություններ հրահրել պարզապես⁴³։

Առաջին հայացքով անըմբռնելի թվացող այդ ծրագիրը, սակայն, իրականում էապես հակահայկական երկու նպատակ էր հետապնդում՝ մի կողմից՝ ֆրանսիական զորքերին հարկադրել դեպի հարավ (Հալեպի շրջան) արշավելու և դրանով իսկ Թուրքիայի համար հեշտացնել «վտանգված» Կիլիկիայի «փրկությունը», ու մյուս կողմից՝ Կիլիկիա վերադառնալու պատրաստվող հայ տարագիրների համար սիրիական բնակավայրերը ևս դժոխք դարձնել։

⁴⁰ Զինադադարից հետո Դամասկոսում թեև հաստատվեց Ֆեյսալի սիրիական կառավարությունը, սակայն Անդլիան, «Սիրիան» (պատմա-աշխարհագրական այդ տերմինի մեջ միավորվում էին ժամանակակից Սիրիան, Լիբանանը, Պաղեստինը և Անդրհորդանանը) «թշնամու օկուպացված տերիտորիա» հռչակելով ենթարկեց Մեծամոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար Ալլենբիին։ Վերջինս «Սիրիան» բաժանեց 3 գոտիների. հարավային՝ որ ընդգրկում էր Պաղեստինն ու Անդրհորդանանի մեծ մասը և անգլիական ռազմական կառավարման ներքո գրվեց, արևմտյան՝ որ ընդգրկում էր Լիբանանն ու Լաթաքիայի շրջանը և ֆրանսիական ռազմական կառավարման ներքո գրվեց, արևելյան՝ որ ընդգրկում էր Դամասկոսը, Հալեպը, Ջերբլ Դրուզն ու Անդրհորդանանի մի մասը և որ գրվեց Ֆեյսալի կառավարման ներքո (տե՛ս Ն. Հովհաննիսյան, Հոկտեմբերը և աղգային-ազատագրական շարժման վերելքը արաբական Արևելքում, էջ 96)։

⁴¹ E. Brémond, La Cilicie en 1919—1920, Paris, 1921, p. 8.

⁴² Z. N. Zeine, The Struggle for Arab Independence, pp. 123 and 148.

⁴³ «La Syrie et le Liban en 1921», pp. 73—102. «Ռազմական գոտին» ընդգրկում էր Իսկելե, Ջեզիրե բեն Օմար, Ալի Աբու Քեմալ, Հասան և Փայաս բնակավայրերը իրար միացնող ուղիղ գծերից ներս ընկած երկրամասը։

Այդ ծրագրի հատկապես երկրորդ մասի շուտափույթ իրագործումը, հասկանալիորեն առաջնային նպատակ պիտի դառնար հայկական կոտորածների կազմակերպման ասպարեզում բազմափորձ և թվաշատ թուրքական գործակալների համար: Վերջիններս արաբական բնակավայրերում տեղադրվել էին Պոլսի երկու նախկին ոստիկանապետերի՝ Ազմի ու Բեզրի բեյերի կողմից, որոնք արևմըտահայ մտավորականության բնաջնջումը գլուխ բերելուց հետո, հատուկ առաջադրանքով, որպես կառավարիչ Բեյրութ ու Հալեպ էին ուղարկվել և ընդհուպ մինչև պատերազմի ավարտը այնտեղ շարունակել իրենց հայասպան գործունեությունը⁴⁴:

Սիրիայում աշխուժացված թուրքական գործակալություններն էին, որ իրենց կենտրոնի ցուցումով կազմակերպեցին, ղեկավարեցին և հիմնականում նաև գործադրեցին Հալեպի 1919 թ. փետրվարի 28-ի հակահայ արյունոտ բռնությունները, որոնք առայսօր հավաստի պարզաբանման չեն արժանացել և երբեմն թյուր կերպով են մեկնաբանվում: Արդարև, իր ժամանակին ֆրանսիական գաղութարարների կողմից հասկանալի նպատակներով տարածանված պնդումն այն մասին, որ իբր բրիտանական հրամանատարության թողտվությամբ արաբներն են կազմակերպել հալածահայերի ջարդը⁴⁵, հետագա արձագանք գտնելով սփյուռքահայ մամուլում⁴⁶ և արևմտյան հեղինակների մոտ⁴⁷, թյուրիմացությամբ քաղաքացիության իրավունք է ձեռք բերել նաև մեղ մոտ՝ որպես

⁴⁴ Ղազարյան. Դիմակավոր թուրքերը, «Հայրենիք», Բոստոն, 12 և 13.5. 1945 թ.:

⁴⁵ Դեպքերի գլխավոր ղեկավարներին զննապետ Բրեմոնը փարիզյան «Հայագիտական հանդես»-ին («Revue des Etudes Armentiennes») տրամադրած իր հուշերում առաջինն է ընդգծել, որ «հակառակ անգլիական կայսրորդի ներկայության Հալեպում քրիստոնյաների ցարգեր տեղի ունեցան») տես՝ E. Brémond, La Cilicie en 1919—1920, p. 17.

⁴⁶ Տե՛ս Կահիրեի «Արև» օրաթերթի 1924 թ. ապրիլի 14-ի և 1925 թ. նոյեմբերի 19-ի համարները: Թերթի Փարիզի թղթակից Մարան, իր «Սուրիական դեպքերը և ֆրանսիական կառավարությունը» հաղորդման մեջ նշել է. «Ֆրանսիական հողատարության դեմ սարքված շարժում մը, որուն թելադրությունը միշտ Դամասկոսն է՝ մահմեդական Սուրիո այդ միշնաբերդին կուգար, նույնիսկ հայկական կոտորածի մը տեղի տվավ, որովհետև Ֆրանսիա Սուրիա մտած էր հայ զինվորով և հայերը կնկատվեին ֆրանսիական տիրապետության դրոշակակիրները («Արև», 19.11.1925 թ.):

⁴⁷ Տե՛ս Լեճգրիգ, նշվ. աշխ., էջ 80:

«անպիտան իմպերիալիստների կողմից հրահրված հայ-արաբական արյունալի իրադարձություններ»⁴⁸։

Հայ-արաբական փոխհարաբերությունների պատմության հետ իրենց աղերսից անկախաբար, Հալեպի դեպքերը առավել ուշադիր և խորադիտելի պարզաբանման արժանի են նաև այն պատճառով, որ անխնայ ժողովուրդն անհավատալի քանակությամբ զինադարձանության հետ և վկայում են այն մասին, թե Մուդրոսի զինադարձության անմիջապես հետո ո՞ւմ դեմ և ի՞նչ տիպի գործունեության ձեռնարկեցին Մուստաֆա Քեմալը և նրա հետևորդները։

* * *

Սիրիայում օսմանյան բանակների ջախջախման նախօրյակին՝ 1918 թ. օգոստոսի 11-ին, սիրիա-պաղեստինյան ռազմաճակատի հրամանատար նշանակված Մուստաֆա Քեմալը⁴⁹ հոկտեմբերի սկզբին փութացել էր Կիլիկիա՝ Տավրոսի բնական պատվարը որպես լուսաշողունական վերջին անթափանցելի գիծ կազմակերպելու և ղորքերի նահանջը այդ գծի վրա բեռնացնելու մտադրությամբ։ Զինադարձության հուլիսին, սակայն, ըստ ինքյան հոգս ցնդեցրեց անգլո-ֆրանսիական զորքերի առաջխաղացքի դեմ բնական պատվարին վերապահվող դերը և, ընդհանրապես, տեղահանված կիլիկիահայերի վերադարձի հավանականության պայմաններում, անհրաժեշտ դարձրեց միաժամանակ հայության հոսքի և դրանից բխող «առաջնային վտանգի» կանխարգելման մի այլ՝ «մարդկային պատվարի» ստեղծման մասին։ Այդ մտահոգությամբ է, որ «Ֆախրի յավեր» (սուլթանի անմիջական տեղակալ) հռչակված⁵⁰ Քեմալն ու նրա գործակից նիհադ փաշան, կիսատ թողնելով ձեռնարկված ամրությունները, սկսեցին ռազմաճակատից վերադարձող զինվորներին որպես «խաղաղ բնակիչներ» տեղավորել Ադանայի շրջանում, իսկ մնալ չհամաձայնվողների զենքերը հատուկ ցուցակներով բաժանել թուրք գյուղացիներին։ Միաժամանակ նրանք շտապ կարգով արևելյան ռազմաճակատից Կիլիկիա հրավիրեցին Հաշեմ բեյին և նրան վստահեցին երեք հազարանոց ժանդարմների

⁴⁸ Հ. Քոֆուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին, Երևան, 1968, էջ 26, ծան. 32։

⁴⁹ Н. Эфендиева, Борьба турецкого народа против французских оккупантов на юге Анатолии. 1919—1921 гг., Баку, 1966, стр. 27.

⁵⁰ М. Кемаль, Путь новой Турции, т. III, М., 1934, стр. 383.

հրամանատարությունը: Այս միջոցառումներից և նահանգապետ Նաղիմ բեյին ու Կոնիայի սպայակուլյտի կողմից հատկապես գործուղված Թեֆիք բեյին հատուկ հրահանգներ տալուց հետո միայն Քեմալն ու Նիհադը դեկտեմբերի 13-ին հեռացան Ադանայից⁵¹:

Քեմալի մեկնումից անմիջապես հետո նրա մտավախություններն սկսեցին իրականություն դառնալ: Դաշնակից զորքերի և հատկապես Հայկական լեգեոնի առաջխաղացքից քաջալերված, հայերը գունդ առ գունդ վերադառնում էին իրենց պապենական տները: Եվ Պոլսի ու Կոնիայի կենտրոնները գործի անցնելու ազդանշան տվեցին. ոչ միայն Կիլիկիայում, այլև Սիրիայի հյուսիսային շրջաններում անհրաժեշտ էր շուտափույթ կերպով հայկական կոտորածներ հրահրելով խափանել տարագիրների վերադարձը:

Ամբողջ դավադրությունը և Ադանա քաղաքում նրա գործադրումը գլխավորելու էր Կովկասյան ռազմաճակատում դիվիզիայի նախկին հրամանատար և հայերի հետ հաշվհարդարի մասնագետ Հաշեմը, որպես հարվածային ուժ օգտագործելով ֆրանսիացիների թողտվությամբ պահպանված թուրքական ժանդարմերիան, բանակի մնացորդները և մոլեռանդ ամբոխը⁵², որին Թեֆիք բեյը սրտադողի էր մատնում՝ իր ելույթները զարդարելով Նիհադ և Քեմալ փաշաներից ստացված «ահազանգերով» այն մասին, որ իբր հայերը և հատկապես հայ լեգեոնականները գալիս են թուրքերին խողխողելու⁵³:

Ադանայից արևելք և հարավ դավադրությունը գլխավորելու էր հայտնի ջարդարար Ալի Սաիբը⁵⁴ (ապագա «հրամանատար Նամեկ»), որ Կոզանի և Զուլկադրիեի շրջանում հենվելու էր ոչ միայն ժանդարմերիայի, այլև «Ինթիբախ» գաղտնի կազմակերպության ոճրագործների վրա, իսկ Թեյ Աբիադից մինչև Արաբ Բունար և Զաբարլուսից մինչև Հալեպ նա իր արյունալի գործը զլուխ էր բերելու արաբական բնակավայրերի թուրք ազգաբնակչության ձեռքով, հնարավորության դեպքում օգտագործելով նաև անաղե ու շամմար բեդուինների թրքասեր առաջնորդներին և Հալեպի իթթի-հատական արաբներին:

⁵¹ Դյուվ Վեու, նշվ. աշխ., էջ 64, Բեհմոն, նշվ. աշխ., էջ 8:

⁵² Բեհմոն, նշվ. աշխ., էջ 7:

⁵³ Դյուվ Վեու, նշվ. աշխ., էջ 65—66:

⁵⁴ Տե՛ս նրա «Հուշագրությունը», *All Saib*, Les Atrocites en Cilicie et les Luittes pour la Délivrance à Ourfa, Angora, 1340, (traduit par MA-YER).

Դավադրության գաղափարական առաջնորդի ղերով հանգես էր դալիս իմամ Մահմեդը, որ Աղանայի մզկիթներում իր ելույթները զարգարում էր էնվերի անվան հետ կապվող հորդորներով. «Խողխողեք բոլոր անհավատներին, քանի դեռ լրիվ անգեն են: Մի ինայեք ո՛չ կանանց և ո՛չ էլ երեխաներին»⁵⁶:

Ֆրանսիական հետախուզությունը ստուգապես իմացել էր, որ Պոլսի և Կոնստանդնուպոլսի կենտրոնների համամտությամբ թուրքական խռովությունը շղթայազերծվելու էր 1919 փետրվարի 28-ին և որ հայերի ու միայն հայերի դեմ արյունոտ բռնությունները տարածվելու էին նաև Աղանայից դուրս, հյուսիսային Սիրիայի բնակավայրերի և հատկապես Հալեպի վրա⁵⁷:

Դեռ Քեմալի Աղանայում գտնվելու օրերին՝ 1918 նոյեմբերի 30-ին Ալեքսանդրետում, իսկ նրա Պոլիս մեկնելու նախօրյակին՝ դեկտեմբերի 12-ին Բեյլանում թուրքերի կողմից ձեռնարկված հակահայ հուզումները առանց այդ էլ հուշում էին նախապատրաստվող դավադրության մասին: Ավելին, ինչպես վկայում է Պոլսի «Ժողովուրդ» թերթը, ֆրանսիական պատասխանատուները ստուգապես գիտեին, որ թուրքերը «պատրաստություններ տեսնելու վրա են՝ դեպքեր առաջ բերելու նպատակով»⁵⁷: Սակայն բրիտանացիների հետ խուլ մրցակցության պայմաններում առաջին հերթին իրենց երեկվա թշնամուն սիրաշահելու հետամտող ֆրանսիական գերագույն կոմիտարիատը և Կիլիկիայում նրա զինվորական կամակատարները նախընտրում էին ճնշել հակազդող հայերին՝ ցրելով Հայկական լեգեոնի 4-րդ գումարտակը և զինաթափելով ու Պորտ Սահլ պատժական գումարտակների շարքն ուղարկելով Ալեքսանդրետյան 10-րդ և 13-րդ հայկական վաշտերը⁵⁸:

Լեանտում ֆրանսիական ներկայացուցիչների շրջանում, սակայն, կային մարդիկ, որոնք ուրիշ հայացքով էին նայում իրադրությանը և որոնց պարագլուխը Կիլիկիայում վարչական վերահսկողության պետի պաշտոնին նշանակված Բրեմոնն էր: Վերջինս, դեռ Անտանտայի Հայֆայի զորակենտրոնում գտնված օրերին Ալլենբիից հավաստիք էր ստացել, որ Հալեպի և ամբողջ հյուսիսային Սիրիայի, Այնթապի, Ուրֆայի և Մարաշի շրջանների անվտանգու-

⁵⁶ Դյու Վեալ, նշվ. աշխ., էջ 74:

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ «Ժողովուրդ», 22.12.1918 թ.:

⁵⁹ Դյու Վեալ, նշվ. աշխ., էջ 68—69:

թյան պատասխանատու գեներալ Լեսլիի «Անապատի հեծյալ բու-
նակի» («Desert mounted corps») ստորաբաժանումները, «անհու-
սալի» հայտարարված հայկական զինական ուժի փոխարեն գալու
էին Կիլիկիա իրեն թևարկության: Փետրվարի 1-ին Ազանա ժամա-
նելով և թուրքական դավադրության հասունացմանը իրազեկ դառ-
նալով, Բրեմոնը Լեսլիից խնդրում է իր բանակով շտապել Կիլի-
կիա: Բրիտանական հազարավոր զինվորներ փետրվարի 18-ին
սկսում են ժամանել Ազանա և պաշարման դրությոն մտցնելով՝
կանխում խռովությունը, իսկ Լեսլին անձամբ ձերբակալում է դա-
վադրապետ Հաշմին⁵⁹:

Այստեղ պետք է նշենք, որ Կիլիկիայի վարչական վերահսկո-
ղության պետ Բրեմոնը, գեներալ Լեսլիի զորքերին «Ֆրանսիական
գոտի» հրավիրելով, փաստորեն դեմ էր գնում Փարիզի իր մեծա-
վորների քաղաքականությանը, որը կայանում էր բրիտանական
ներթափանցմանը կատաղի դիմադրություն ցույց տալու և Կիլի-
կիան սոսկ որպես խայժ օգտագործելով՝ Թուրքիայից տնտեսական
նոր կոնցեսիաներ խլելու և Սիրիայի իրադարձություններին մի-
ջամտելուց հեռու պահելու մտահոգության մեջ⁶⁰: Եվ հակառակ
հայկական աղբյուրների գրեթե միաձայն այն պնդմանը, որ Բրե-
մոնի ամբողջ վարքագիծը «հայասիրական զսպանակներ» ուներ,
Ֆրանսիական վարչական պատասխանատուն վերջին հաշվով
մնում էր անձնվեր կամակատարը Ֆրանսիական կապիտալիստ-
ների այն խմբի, որի շահերը պահանջում էին ամեն գնով պահ-
պանել Կիլիկիան, և բրիտանական զորքերի առկայությամբ խոչ-
ընդոտել իրենց երկրի կապիտալիստական այն շրջանների մտա-
դրությունները, որոնց շահերը թելադրում էին Կիլիկիան ղիջել
քեմալականներին և որոնց անձնվեր կամակատարը Ժորժ Պիկոն
էր⁶¹: Հատկանշական է, որ այնպիսի լավատեղյակ մի ժամանակա-
կից, ինչպիսին լրագրող Պայյարեսն է, չի թաքցնում, որ Բրեմոնը

⁵⁹ Ն. էֆենդիևան առանց իրադրությունը րարելիզորեն պատկերելու ու նույ-
նիսկ առանց վկայակոչված աղբյուրները հարազատորեն օգտագործելու պնդում է,
որ Սահակ կաթողիկոսն է «Հայերի փրկիչ» գեներալ Լեսլիին Կիլիկիա հրավիրել
և որ բրիտանական զորքերն էլ իրենց Կիլիկիա ներխուժումը արագացրել են այն
պատճառով, որ «Հայկական լեգեոնը ոչ միայն պայքար չսկսեց թուրքերի դեմ,
այլև հեռու չէր նրանց ազգային-ազաագրական պայքարին թիկունք տալուց»
(տե՛ս Н. Эфендиева, Борьба турецкого народа против французских ок-
купантов на юге Анатолии, Баку, 1966, стр. 89)։

⁶⁰ J. P. Alem, L'Arménie, Paris, 1962, p. 64.

⁶¹ All Fuat Cebesoy, Milli Mücadele hatıraları, Istanbul, 1953, s. 64.

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության և հետևաբար Պիկո—Գուրո երկյակի քաղաքականությանը դեմ գնալու պատճառով շնորհազրկվեց և ես: կանչվեց Կիլիկիայից⁸²:

Ի դեպ, պաշտոնական Ֆրանսիան բացորոշ չէր պարզում իր մտադրությունները Կիլիկիայի նկատմամբ, նույնիսկ չէր վարանում դաշնակցական կառավարության կողմից Ա. Ահարոնյանի ղլխավորությամբ Փարիզ ուղարկված պատվիրակությանը հասկացնելու, որ «Կիլիկիան Սիրիայի մի անբաժան մասն է և հայերը ոչ մի իրավունք չունեն»⁸³:

Բանը նրանում էր, որ ազգային անկախության անխուսափելիությանը հավատացող սիրիական բարեմիտ ազգայնականները սկսել էին դեթ թղթի վրա ձևել նոր Սիրիայի քարտեզը: Աչքի առաջ ունենալով դեռ դարասկզբին «Արաբական հայրենիքի լիգայի» կողմից հշտորոշված սահմանները, որոնք 1915 թ. գարնանը նվիրադրոժվել էին սիրիական «ահականների» կողմից էմիր Ֆեյսուլին ներկայացված «Դամասկոսի արձանագրությամբ», նրանք իրենց առաջադիմական հյուսիսային սահման էին նախանշում Տավրոսը՝ փաստորեն հերքելով Կիլիկիայի վրա հայկական ամեն մի իրավունք⁸⁴:

Ֆրանսիական արտաքին քաղաքականությանը տոն տվող մոնոպոլիստական կապիտալի այն հատվածը, որ հետպատերազմյան Թուրքիայում իր տնտեսական ու քաղաքական ներթափանցումը հարթող հաղթարարների շարքն էր դասում Կիլիկիայի նվիրաբերումը երիտթուրքերի ժառանգորդներին, տվյալ պահին դեռ չխիզախելով բացել իր խաղաքարտերը՝ ջանում էր քաջալերել սիրիական սուլթանականների հավակնոտ այդ դիրքորոշումը⁸⁵ և Կի-

⁸² Պայլաւեօ. նշվ. աշխ., էջ 186—187:

⁸³ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 154:

⁸⁴ «Արև», 4.9.1925 թ.: Սիրիական գլխավոր կոնգրեսը 1919 թ. հուլիսի 2-ին պաշտոնապես ընդունելու էր այդ «Արձանագրության» նախանշած սահմանները. տե՛ս «Paper, Relating to the Foreign Relations of the United States», 1919 vol. XII, Washington, 1947, p. 780.

⁸⁵ Հետաքրքիր է, որ մինչ այդ էլ եվրոպական մի շարք հեղինակներ Կիլիկիան «նվիրաբերել» են Սիրիային: Այսպես, է. Յանդի «Արաբիան» հյուսիսում սկսում է Ադալիայի ձոցից. կիսում Տավրոսը, Մալաթիայի և Բիթլիսի վրայով իր սահմանը տարածում է մինչև Վան և շարունակվում մինչև Ուրմիայի լիճ (տե՛ս E. Jung. Les Puissances devant la Revolte Arabe, Paris, 1906). Հ. Ռիշարդը, ես, թեև ավելի «ժլատ», Սիրիայի հյուսիսային սահմանը նշել է Տավրոսն ու Անտիտավրոսը՝ արաբացնելով հատկապես Ադանայի վիլայեթը (տե՛ս H. Richard. La Syrie et la Guerre, Paris, 1916).

լիկիան ներգրավել իր «հովանավորությանը» վստահված սիրիական պետության կազմում: Չէ՞ որ ծրագրվող «միացյալ Հայաստանը», եթե ընկնելու էլ լինեի մանդատների սարդոստայնի մեջ, ասյուականակած թափին էր հանվելու ամերիկյան «հոգատարին» և ուրեմն Կիլիկիան ինքնաբերաբար դադարելու էր «թանկագին պատանդ» լինելուց⁶⁶:

Սակայն կար մի այլ հանգամանք ևս: Ֆրանսիական մոնոպոլիստական կապիտալը, վերջին հաշվով, առաջինն էր շահագրգռված հայ-արաբական անհասկացողությունների առաջացմամբ ու խորացմամբ և ուրեմն չէր կարող իրեն զլանալ սիրիական ազգայնականների ախորժակները գրգռելով Կիլիկիան կռվախնձոր դարձնելու նենգամտությունը:

Եվ ահա, 1919 թ. հունվարի սկզբներին, ֆրանսիական մոնոպոլիստական կապիտալի լեանտի տնտեսական երակներից սնվող խմբավորումներից մեկի՝ Մարսելյի Առևտրի պալատի իսկ նախաձեռնությամբ հրավիրվում էր «Սիրիայի ֆրանսիական կոնգրեսը»⁶⁷, որտեղ «Սիրիա» պատմա-աշխարհագրական ու քաղաքական հասկացողության մեջ տարրալուծվում էր նրա հետ ոչ մի կերպ չառնչվող «Կիլիկիա» միավորը: Կոնգրեսին հրավիրված սիրիական գործիչների համար հրապուրիչ ու շոյող այդ դիրքորոշումը, սակայն, չէր կարող շխրտնեցնել հայերին ոչ միայն կոնգրեսից, այլև սիրիական ազգայնականությունից ընդհանրապես⁶⁸: Բյուրեղացնելով հայության վերաբերմունքը, պատմաբան Գ. Բասմաջյանը՝ Մարսելյի Առևտրի պալատի սպասարկությանց ընդհանուր տնօրեն Հ. Բրենիեին ուղարկված բողոքագրում ընդգծում էր. «Ցանկանալով հայերի նման սիրիացիներին ևս տեսնել օսմանյան լծից ձերբազատված և իրենց հայրենիքում անկախ պետականություն ստեղծած... վախենում եմ, որ Կիլիկիայի հարցը ապագային հարևան երկու ժողովուրդների միջև երկպառակության առիթ է դառնալու»⁶⁹:

⁶⁶ Այս կապակցությամբ հիշատակենք թեկուզ սոսկ այն փաստը, որ պրեզիդենտ Վիլսոնը Հայ ազգային պատվիրակությանը բազմիցս խորհուրդ է տվել շփման մեջ մտնել Արևելյան հարցերի ամերիկյան հանձնաժողովի հետ և իմունք տալ, որպեսզի ԱՄՆ-ի կառավարությունը պաշտպանի Կիլիկիան՝ Սիրիայի հետ չմիախառնելով, «միացյալ Հայաստանի» կազմում ներգրավելու տեսակետը (տե՛ս «Հայ ձայն», 20.4.1919 թ.):

⁶⁷ «Ժողովուրդ», 21.12.1918 թ.:

⁶⁸ Տե՛ս «La Voix de l'Arménie», 2^e année No. 25—26, p. 51.

⁶⁹ Նույն տեղում:

Կիլիկիայի շուրջ տեղի ունեցող բաղամասնակից ու բարդ այս խաղի պայմաններում էր, որ ծրագրվում էր թուրքական հակահայ դավադրությունը, որը, ինչպես նշեցինք, Կիլիկիայի վարչական վերահսկողության պետ Բրեմոնի նախաձեռնության շնորհիվ ձախողվում էր կիլիկյան բնակավայրերում:

Բրեմոնը, սակայն, Ադանայի շրջանում վերահսկելու համար իր սլաշտոներ վտանգելու գնով բրիտանական զորքերի օգնությանը դիմելով, հասկանալի է, որ հնարավորություն չունեի որևէ կերպ ադրելու Հալեոլում դեպքերի ընթացքի վրա: Եվ 1919 թ. փետրվարի 28-ին, անտեղյակ կիլիկյան բնակավայրերում գործի ձախողումից, Հալեպի թուրք դավադիրները գլխավորեցին տեղաբնակ իրենց հայրենակիցների և արաբ խավարամիտ որոշ տարրերի խժոժությունները անգն և անպաշտպան հայ գաղթականների՝ հիմնականում անապատի արհավիրքներից փրկված այրիների և որրևորի դեմ:

Հալեպի կոտորածի հայ զոհերի թվի շուրջ ճշգրտված տվյալներ չկան: Ժամանակի հայ մամուլը բավարարվել է արձանագրելով բրիտանական իշխանությունների «պաշտոնական» հաղորդումն այն մասին, որ սպանվել է մոտ 50, վիրավորվել՝ շուրջ 100, և անհայտ կորել՝ 30 մարդ⁷⁰: Այդ թվերն է հետագայում կրկնել հետաքննող հանձնաժողովի անդամներից Մ. Նաթանյանը⁷¹: Իրադարձությունների ժամանակակից Դյու Վեուս սպանվածների թիվը բարձրացնում է 200-ի, հալեպահայ լրագրող Ն. Ճանճին՝ 300-ի, իսկ դր լա Սուշերը՝ «հարյուրավորների»⁷²: «1000—1500 սպանված և վիրավոր», պնդում է այդ օրերից մեղ հասած արխիվային մի փաստաթուղթ⁷³: Այդ փաստաթղթի, այլ խոսքով զոհերի թվի մի քանի հարյուր լինելու հավանականության օգտին է խոսում այն, որ կախաղան բարձրացված, բանտից փախչել փորձելիս զնդա-

⁷⁰ «Ժամանակ», Պոլիս, 24.3.1919 թ.: «Կիլիկիա», Ադանա, 12 և 14.3.1919 թ.: Հայիպի «Եփրատը» (14.11.1932) զոհերի թիվը 52 է հուլյց տալիս:

⁷¹ Մ. Նաթանյան, Սուրիո խառնակությունները և հայերը, «Արև», 31.10.1925 թ.:

⁷² «Մարտկոց», 22.9.1932. Դյու Վեու, նշվ. աշխ., էջ 74: E. de la Souchère. Le Racisme en 1000 Images, Paris, 1967, p. 217

⁷³ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 19, թ. 1—4: Մատենագրություններում նրշվում է Ա. Անտոնյանի «Հալեպի շարժերը, ականատեսի վկայություն» գրքույկը (հայերեն և ֆրանսերեն, տպված 1919 թ.), որը դժբախտաբար մեզ չհաղորդեց գտնել Երևանի գրապահոցներում:

կահարված կամ տաժանակրոթյան դատապարտված չարդարարները իրենք իսկ թվով մի քանի հարյուր հոգի էին, դեռ չխոսելով շրացահայտված հանցապարտների մասին:

Այստեղ, սակայն, ղոհների թվից ավելի մեզ հետաքրքրում են այլ հարցեր, որոնց շարքում երկրորդական տեղ չի գրավում արյունալի դեպքերի մեջ բրիտանական մեղսապարտության աստիճանը:

Փաստերի բացակայության դեպքում անգամ չէր կարելի կասկածել, որ Ֆրանսիականից շատ ավելի լավ կազմակերպված բրիտանական հետախուզությունը ևս ստույգ իմացել էր Հալեպի հայերին սպառնացող վտանգի մասին: Վերջին հաշվով Հալեպից մինչև Նեջդ, մինչև անադե բեգուհիների վերջին վրանախմբի շրջանը գործում էր Լոնդոնի գործակալների մի խիտ ցանց, որի լարերն իր ձեռքում էր պահում «արևելագետ» Լեոնարդ Վուլեյը⁷⁴: Եվ հետո, չէ՞ որ հենց այդ ժամանակաշրջանին վերաբերող բրիտանական փաստաթղթերում ենք հանդիպում Սիրիայում թուրքական գործակալությունների մասին առավելագույն քանակի հետախուզական տվյալների...

Համենայն դեպս, բրիտանական իշխանությունները չէին կարող անգիտանալ, որ Հալեպի վարչատնտեսում բույն դրած թուրքերի կողքին աշխատում էին նաև շատ արաբներ, «որոնք թուրք մտայնությամբ սնած և թուրք դաստիարակությամբ զարգացած, մեծ մասով իթթիհատի կպատկանեին, նույնիսկ ոստիկանապետը և հասարակ ոստիկաններ», որ Հալեպի «էշրաֆեն (ավագանուց) ալ շատերը այդ կուսակցության կպատկանեին» և որ «նույնպես արաբական բանակեն ալ բարձրաստիճան սպաներ միևնույն կուսակցության անդամ էին, նախապես օսմանյան բանակին մեջ ծառայած անձեր ըլլալով»⁷⁵: Պոլսահայ մամուլի թղթակիցները իրավամբ ընդգծում էին, որ «գարշելի իթթիհատը հոս ալ (Հալեպում) խորունկ արմատ ձգած էր արաբ զանազան խավերուն մեջ, և դուրին էր հասկնալ թե թուրքիո մեջ տակավին գաղտնապես գործող իթթիհատականները շատ դյուրավ կրնային հարաբերության մեջ մտնել իրենց Սուրիո կուսակիցներուն հետ և զիրար շատ լավ կհասկնային»⁷⁶:

Հալեպում շատ շատերի, առավել ևս բրիտանական իշխանությունների համար գաղտնիք չէր, որ Ահմեդ բեյ անվանյալ մի

⁷⁴ Դյուլ Վեու, նշվ. աշխ., էջ 82—85:

⁷⁵ «Ժողովուրդի ձայնը», 29.3.1919 թ.:

⁷⁶ Նույն տեղում:

թուրք սպա" օրը ցերեկով ղեկավարում էր կիսառազմական մի կենտրոն⁷⁸, որի վերահսկողության ներքո էին գտնվում 1918 թ. աշնանը իթթիհատական արաբների կողմից կազմակերպված «Նադի ալ-արաբ» («Արաբական ակումբ») ընկերությունը⁷⁹ և հատկապես նոյեմբերի երկրորդ կեսից հրապարակ նետված նրա օրգան «Ալ-Արաբ» ազդեցիկ օրաթերթը:

Դժբախտաբար, հալեպահայության ղեկավարները, լրիվ անգիտանալով այդ կազմակերպության և նրա պաշտոնաթերթի կազմերը թուրքական շրջանների հետ, նրանց համարում էին արաբական հասարակական կարծիքի իսկական խոսնակները և ջանում էին սերտ գործակցություն հաստատել նրանց հետ: Բավարարվենք նշելով, որ «Արաբական ակումբը» որոշ իմաստով դառնում էր նաև հայ տարագիրների մշակութային գործունեության հիմնական կենտրոնը, երաժշտա-թատերական և այլ միջոցառումների միակ հավաքատեղին, իսկ «Ալ-Արաբի» լույս ընծայումն ու «շահեկան և լուրջ պարունակությունը» ջերմորեն ողջունվում էին հալեպահայ մամուլի կողմից⁸⁰: Հալեպահայ գործիչները չէին զգաստանում նույնիսկ այն ժամանակ, երբ բրիտանական պառլամենտի նիստերում հայ ժողովրդի հասցեին կատարված ջերմ ելույթները դառնությունամբ էին արձանագրվում «Ալ-Արաբի» էջերում, որտեղ նաև քիչ եռանդ չէր վատնվում արաբներին ներշնչելու համար այն միտքը, որ Մեծ Բրիտանիան ջանում է «հայկական անկախ կառավարություն» ստեղծել «արաբին և թուրքին միջև պատվար մը ըլլալու», այլ խոսքով՝ արաբական երկրները իսլամական աշխարհից կտրելու համար⁸¹:

⁷⁷ Հիշյալ Ահմեդը եկել էր փոխարինելու Կոնիայի շրջանի հայերի կոտորածի կազմակերպիչ Սաադեդդինին, որը 1918 թ. սկզբներին գործուղվել էր Հալեպ օրպես «ոսկրհեղին» և «քաղաքին անկումին վշա, չկրնալով որևէ կողմ փախչի և վախճալով հայերու վրեժխնդրությունն, անձնասպան եղած էր» (տե՛ս «Ժողովուրդ», 11.11.1918 թ.):

⁷⁸ Դյու Վեու. նշվ. աշխ., էջ 143:

⁷⁹ R. de Gontaut-Biron et L. Le Reverend, D'Angora à Lausanne (Les Etapes d'une Dechéance), Paris, 1924, p. 63.

⁸⁰ «Հայ ձայն», 25.11.1918 թ.:

⁸¹ «Հայ ձայն», 5.12.1918 թ.: Արաբական երկրների դադութականացման բրիտանական ծրագրի «հայրերից»՝ Մարկ Սայքսի պատվին Հալեպի արաբ և հայ որոշ գործիչներ թեյասեղան էին կազմակերպում «Արաբական ակումբում» և իրար հաջորդելով տարաբնույթի և հայերի մեծ բարեկամի» հասցեին ջերմ ելույթներ էին ունենում «Ալ-Արաբի» և «Հայ ձայնի» խմբագրապետները (տե՛ս «Հայ ձայն», 1 և 3.12.1918 թ.):

Եվ ահա «Ալ-Արաբի» գլխավոր խմբագիր Ահմեդ Սամի ալ-Սարրաջը, որի «Թրքացած և թուրք դրամի սպասարկու» լինելը շատ ուշ էր պարզվում հայերի համար⁸², 1919 թ. փետրվարի սկզբներին ուղևորվում է Ադանա, անկասկած թուրք դավադիրների հետ խորհրդակցելու, և վերադարձին ստորագրում է «Հայը և արաբը» խորագրով չարամիտ մի հոդված, պնդելով, որ Սիրիայի ծայր հյուսիսում և Կիլիկիայում իբր «հայ ասպատակները» արյունոտ հաշվեհարդար են տեսնում արաբների հետ⁸³։ Այդ հոդվածից կառչելով, «Արաբական ակումբի» ղեկավարները սկսեցին ժողովրդի հետամնաց խավերի շրջանում հակահայ կրքեր բորբոքել և հալեպցիներին կոչ էին անում փետրվարի 28-ին հավաքվել «Ուրբաթօրյա շուկայում» («Ջումաա բազար») և բողոքի ելույթ կազմակերպել հայերի «բռնությունների» դեմ⁸⁴։

Քաշ իմանալով հանդերձ, թե ինչի կարող է հանգել կրքերի բորբոքումը ուրբաթօրյա շուկայում, որտեղ համախմբվելու էին Հալեպի և շրջակա բնակավայրերի հայատյաց թուրքերը և որոշ մոլեռանդ արաբներ, բեդուիններ ու դեռ հետնախորշերի կասկածելի բոլոր տարրերը, բրիտանական զինվորական իշխանությունները (որոնք մինչ այդ բավարարվել էին «Ալ-Արաբ» թերթի խնդրո առարկա համարի տպաքանակի մի մասը բռնագրավելով)⁸⁵ փաստորեն ոչ մի վճռական քայլի չդիմեցին։ Նրանք բավարարվեցին միայն «Արաբական ակումբի» ղեկավարներին նախազգուշացնելով, որ շուկայում որևէ քաղաքական ելույթ չեն թույլատրի։ Հասկանալի է, որ այդպիսի կրավորական նախազգուշացումը չէր կարող կանխել թուրքական գործակալությունների կողմից շաբաթներ առաջ ծրագրված ու կազմակերպված արյունահեղությունը։

⁸² «Կիլիկիա», 14.3.1919 թ.։

⁸³ Ս. Կեպեցյան, Հայ և արաբ հարաբերությունները, «Հայ ձայն», 23.2.1919 թ.։ Հ. Աբամյան, Արաբ և հայ եղբայրակցությունը, նույն տեղում, 27.2.1919 թ.։

⁸⁴ «Կիլիկիա», 14.3.1919 թ.։ «Արաբական ակումբի» ղեկավարները հետագայում, արդեն բրիտանական ռազմական դատարանի առաջ կանգնած, ըստ երկվայթին փորձել են սահմանազատվել «Ալ-Արաբ» թերթից, պնդելով որ իրենց նպատակն է եղել ոչ թե հակահայկական, այլ հակաֆրանսիական ցույց կազմակերպել՝ բողոքելու համար Փարիզի գաղութարարական մտադրությունների դեմ, և որ թուրք պրոպագանդիստներու գրգռությունները իրադարձություններին այլ ընթացք են տվել։ Այդ եզրակացությունն է հուշում Մ. Նաթանյանի «Սուրիո խառնակությունները և հայերը» հոդվածը (տե՛ս «Արև», 31.10.1925 թ.)։

⁸⁵ «Ժամանակ», 24.3.1919 թ.։

Արխիվային մի փաստաթուղթ վկայում է, որ որոշված է եղել ջարդն ու կողոպուտը սկսել կեսօրին, երբ հայերի մեծամասնությունը հավաքված կլինեի քաղաքի շուկայում և փողոցներում, սակայն դավադրության մասնակից մի ոստիկանապետի անհամբերությունը դրոշն ավելի վաղ սկսելու ազդանշան է դառնում: Կարճ ժամանակամիջոցում թուրք ջարդարարները, առաջնորդելով մոլորեցված մի խումբ արաբների, տարածվում են քաղաքով մեկ՝ Զումաա բազար, Ադարե, Բաբ ալ-Ջընեյնի, Քասթալ-Հարամի, Մանկուսա, Բաբ ալ-Նասր և այլուր, հարձակվում հատկապես հայերի բնակավայր որբանոցի, դպրոցների և նախկին զորանոցի վրա, տեղ-տեղ հավաքում հարյուրավոր գաղթականների, որպեսզի պայթուցիկ նյութերով միանգամից ոչնչացնեն բոլորին: Սակայն, — ընդգծված է փաստաթղթում, — անգլիական զորքի տեղ հասնելը, թեև ուշացումով, խափանում է ջարդարարների ծրագրի իսպառ կենսագործումը⁶⁶:

Դժվար չէ կռահել, որ Հալեպում մնացած բրիտանական կայադուրը, եթե կանխօրոք զգուշացված լինելով կազմ ու պատրաստ վիճակում չգտնվեր և բավականաչափ փութաջանություն չցուցաբերեր, հատկապես ջարդարարությունն սկսելու համար ճշտորոշված ժամի խախտման պայմաններում, Հալեպում զոհված հայերի թիվը անհամեմատ մեծ կլիներ:

Դժվար չէ կռահել մանավանդ, որ հիմնական ուշադրությունը գեներալ Լեսլիի բանակի միջամտությամբ Ադանայում դեպքերի կանխարգելմանը նվիրելով, իսկ Հալեպում բավարարվելով արյունահեղությունը սահմանափակելով, բրիտանական գաղութարարները հավելյալ փաստարկ էին ձեռք բերում Ֆրանսիական ազդեցությանը վերապահված «Ա գոտուց» իրենց հեռացման ձգձգումը արդարացնելու և դեպի «կապույտ դոտու» Կիլիկյան հատվածն իրենց ռազմական ներթափանցումը հիմնավորելու համար:

Միայն բրիտանական գաղութարարները չէին, որ աշխատեցին օգտվել Կիլիկիան և Հյուսիսային Սիրիան ընդգրկող թուրքական դավադրության ընձեռած հնարավորություններից: Ֆրանսիական դադութարարները, որոնք ջանացել էին Հալեպին սպառնացող վտանգը գաղտնի պահել Ալլենբիի զորակենտրոնից, հայերի դեմ գործված արյունահեղությունն օգտագործեցին, որպեսզի Սիրիայի նկատմամբ իրենց ծրագրերը արդարացնելու համար վարկաբեկեն

⁶⁶ ՀՄՍՀ ՊԿՊԱ, ֆ. 282, ց. 1, գ. 19, թ. 1—4:

էմիր Ֆեյսալի իշխանութիւնը և հայերին կողմնորոշեն արաբների դեմ:

«Հալեպի մեջ շերիֆյան զորքերու և քրիստոնյաներու միջև պատահած են արյունոտ ընդհարումներ» — ահա նախասկզբնական այն տարածայնութիւնը⁸⁷, որ ֆրանսիական գաղութարարները աշխատեցին հայ մամուլի օգնութեամբ համոզմունք դարձնել հայերի մոտ: Ավելին, նրանք հնարավոր ամեն ինչ արեցին, որպեսզի հայութիւնը ոչ միայն չիմանա Հալեպի արյունահեղութեան առնչակցութիւնը կիլիկյան ձախողված դավադրութեան հետ, այլև համոզվի, որ կիլիկիայի անհանգիստ մթնոլորտը պարզապէս պատճենահանվում է սիրիական-արաբական մթնոլորտի վրա: «Հալեպի դեպքը կարծես արձագանք կուտա Պահլէի մեջ»... «Հալեպի դեպքին հետեանքով Քիլիսի, Այնթապի և Մարաշի մեջ ալ սպառնական զրույցներ շրջեցան», — գրում էր ֆրանսիական շրջաններից իր ներշնչանքն ստացող «Կիլիկիա» թերթը⁸⁸:

Ֆրանսիական գաղութարարների ընթացքը, սակայն, ավելի պարզորոշ արտացոլվեց Հալեպի դեպքերը հետաքննող «միջազգային» հանձնաժողովի աշխատանքների ընթացքում⁸⁹:

Արյունահեղութիւնից անմիջապէս հետո բրիտանական իշխանութիւնները ձերբակալեցին մոտ 200 հոգու, որոնք կազմակերպել էին ջարդերը կամ հանդես եկել որպէս ջարդարար: Ձերբակալվածների մեջ կային և՛ թուրքեր, և՛ արաբներ, ինչպէս հասարակ շարագործներ, այնպէս էլ պաշտոնական անձնավորութիւններ: Քննիչ հանձնաժողովի անգլիացի և արաբ անդամները աշխատում էին ցույց տալ, որ ձերբակալվածների թվում արաբ պաշտոնատարների առկայութեան փաստը ոչնչով չի կարող վկայել Դամասկոսի կենտրոնական արաբական իշխանութեան և Հալեպի նրա ներկայացուցիչների մեղսակցութեան մասին: Ընդհակառակն, հանձնաժողովի ֆրանսիացի անդամը և նրան հետեւելով հալեպահայութեան ներկայացուցիչներ Մ. Նաթանյանն ու Պ. Փափաղյանը ճգնում էին փաստարկել Դամասկոսի արաբական կառավարութեան մեղսակցութիւնը՝ առնվազն Հալեպի «ոստիկանութեան, ժանդարմների և զին-

⁸⁷ «Կիլիկիա», 9.3.1919 թ.:

⁸⁸ Նույն տեղում, 16 և 21.3.1919 թ.:

⁸⁹ Հանձնաժողովը րազկացած էր 2 արաբ, 2 հայ, 2 անգլիացի և 1 ֆրանսիացի անդամներից (տե՛ս «Կիլիկիա», 14.3.1919 թ.):

վորականության մասնակցության» ճանապարհով⁹⁰։ Սակայն բրիտանական զինվորական ատյանը, որ մահապատժի դատապարտեց մի խումբ թուրք և արաբ ռճրագործների, իսկ մոտ հարյուր հոգու՝ երկարաժամկետ տաժանակրության, իր եզրակացության մեջ չընդունեց ֆրանսիացի և հայ հետաքննիչների փաստարկները⁹¹։

Եվ սակայն բուն իսկ արյունահեղությունից ավելի՝ ֆրանսիական «հովանավորողներին» դրդմամբ սիրիական իշխանությունների մեղսակցության շուրջը հայկական շրջանակներում բարձրացված աղմուկը, միառժամանակ բացասական ազդեցություն գործեց հայ-արաբական փոխհարաբերությունների վրա։ Արդարև, Սիրիայի արաբական կառավարության գլխավոր ներկայացուցիչների՝ Հալեպի շրջանի զինվորական ընդհանուր կառավարչի և քաղաքի ղորահրամանատարի պատասխանատվության հարցում հայերի համառ պնդումները և որպես «Հալեպի հայկական միության» անխելամիտ պահանջների հետևանք, նրանց պաշտոնանկությունը սիրիական ազգայնականների շրջանում որոշակի դառնություն առաջ բերեցին։ Հենց այդ դառնությունից էլ կառնեց թրքասեր գործիչների խմբակը և օգտվելով էմիր Ֆեյսալի երկրից բացակա լինելու հանգամանքից (1918 թ. նոյեմբերի 21-ին նա մեկնել էր Եվրոպա, որտեղ մնաց մինչև 1919 թ. ապրիլի 30), փորձեց էլ ավելի խորացնել հայերի և արաբների միջև առաջացած ճեղքվածքը։ Բավական է ասել, որ Հալեպի շրջանի զինվորական կառավարիչ Շուբրի ալ-Այուբիի պաշտոնանկության օրն իսկ տեղի սիրիական իշխանու-

⁹⁰ «Կիլիկիա», 26.3.1919 թ.։ Հալեպում ազգային առաջնորդարանի ենթակայության ներքո գործում էր «Հայ ազգային միությունը»։ Սահակ կաթողիկոսի կողմից նշանակված այդ մարմինը պետք է զբաղվեր ազգային-քաղաքական հարցերով և հատկապես կապ պահպաներ տեղական կառավարության հետ (տե՛ս «Հայ ձայն», 11.1.1919 թ.)։ Բնիկ հալեպահայ մի շարք ազդեցիկ գործիչների անդամակցության իսկ շնորհիվ «Հայ ազգային միությունը» շերտ տրամադրություններ ուներ արաբների հետ փոխհարաբերությունների հարցում։ Պարագան նույնը էր «Հալեպի հայկական միության», որ Փարիզի Ազգային պատվիրակության անմիջական ենթակայության ներքո լինելով, ավելի զգայուն էր արևմտյան, հատկապես ֆրանսիական կողմնորոշման հարցում։ Իսկ քննիչ հանձնաժողովի հայ անդամները՝ Պ. Փափազյանն ու Մ. Նաթանյանը ոչ թե տեղի «Ազգային միության», այլ «Հայկական միության» ներկայացուցիչներն էին, նրա գործադիր ժողովի նախագահն ու քարտուղարը (տե՛ս «Հայ ձայն», 24.12.1918 թ.)։

⁹¹ «Կիլիկիա», 14 և 23.5.1919 թ., 7 և 17.6.1919 թ.։ Ձերբակալվածների մի մեծ խումբ, մայիսի սկզբներին բանտում խռովություն բարձրացնելով փորձել էր փախչել, սակայն զնգակահարվել էր բանտապահների կողմից։

թյունները բոլոր հայերին անխտիր վերջնագիր էին տալիս՝ պահանջելով երեք օրվա ընթացքում թողնել Սիրիան և տեղափոխվել Կիլիկիա...⁹²։

* * *

Տարօրինակ մի զուգադիպությամբ, հենց այն օրը, երբ Հալեպում հայերի դեմ բռնություններ էին գործվում, «Սիրիայի ազգային լիգան» հեռագրով Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին պահանջում էր «մարդկության դեմ գործված ոճիրներուն համար» էնվեր և Թալեաթ փաշաներին ձերբակալել՝ որսվեզի ռիստ պատիժ մը տնօրինվի անոնց», քանի որ նրանք են «պատասխանատուն հայկական և սուրիական վայրագությունց»⁹³։

Պետք է ասել, որ Հալեպի դեպքերին զուգադիպող այդ հեռագրի ոգին բնորոշում է հայ-սիրիական փոխհարաբերությունները ինչպես արյունահեղության նախօրյակին, այնպես էլ վաղորդային։

1919 թ. հունվարի կեսերին Փարիզում էմիր Ֆեյսալը ընդունելով Պոզոս Նուպար փաշային, նրա հետ քննարկեց Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի և Իրաքի հայ գաղթականության վիճակը բարվոքելու կոչված միջոցառումներն ու հայ-արաբական համագործակցության զարգացման հետ կապված հարցերը։ Փարիզի Հայ ազգային պատվիրակությունը այդ առթիվ Ֆեյսալի տրամադրության տակ դրեց Մանչեստրի և Մարսելի հայ գաղթօջախների նվիրատվություններով գոյացած ավելի քան 150 կգ ոսկին, որպեսզի սիրիական իշխանությունները այն օգտագործեն Դամասկոսի, Հալեպի և Բեյրութի հայ գաղթականներին սնունդ և բուժօգնություն հայթայթելու համար։ Ֆեյսալը հեռագրով կարգադրեց «օկուպացված արևելյան երկրամասի» ընդհանուր կառավարիչ Ալի Ռիդա ալ-Ռիկարիին, որպեսզի «ամեն դյուրություն ընծայե և անհրաժեշտ միջոցները ձեռք առնե՝ բարելավելու հայ տարադիրներու կացությունը»⁹⁴։

⁹² «Կիլիկիա», 26.3.1919 թ.։ Անտեզի չի լինի նշել, որ Հալեպի շրջանի ընդհանուր կառավարիչ Շուքրի ալ-Այուբիի «մեղքը», ըստ հայկական մամուլի, կայանում է նրանում, որ «Շուքրի փաշան չէ կրցած առաջը առնել, քանի որ ինքը հոտը առած էր»։ Քաղաքի արաբ զորահրամանատար Ալի Զեդետն էլ, միշտ ըստ հայկական մամուլի, պարզապես «ավելի մեղադրելի է»... (տե՛ս «Կիլիկիա», 14.3.1919 թ.)։

⁹³ «Ժողովուրդի ձայնը», 5.3.1919 թ.։

⁹⁴ Նույն տեղում, 22.1.1919 թ.։

Փարիզից ուղարկված հեռագիրը, սակայն, պարզապես ավելորդ մի հիշեցում էր Սիրիայում իշխանության լծակները իրենց ձեռքում պահող գործիչների համար, որոնք ջանում էին չլքել հայ-արարական մերձեցումը խորացնելու քաղաքականությունից:

Անկասկած անսալով Ֆեյսալի հատուկ կարգադրություններին, Հաշիմյան տոհմի մի քանի իշխանազուներ և պետական-զինվորական մի շարք գործիչներ առավել ուշադրություն էին դարձնում Հյուսիսային Սիրիային, որտեղ կենտրոնացված էր հայ գաղթականության ստվարագույն մասը: Նրանք լավ էին հասկանում, որ հավանական ամեն մի թյուրիմացության հիմնական աղբյուրը թուրքական գործակալությունների մեքենայությունները կարող էին լինել և ուրեմն նրանց համար առաջնային հոգս էր դառնալու հյուսիսի թուրք ազգաբնակչության շրջանում ամեն մի խառնակության կանխարգելումը:

Սիրիական ազգային կառավարության առաջին քայլերից մեկն էր եղել ընդհանուր ներում հայտարարել և այն տարածել սիրիաբնակ թուրքերի վրա, «մոռնալով անոնց չարիքները»: Կարձ ժամանակ անց, սակայն, տեսնելով որ թուրքերը իրենց «խոստումնազանցությունները շարունակելու վրա են», Հալեպի շրջանի զինվորական ընդհանուր կառավարիչ Շուքրի ալ-Այուրին ստորագրեց 1918 թ. նոյեմբերի 24 թվակիր հրահանգը, որը բոլոր թուրքերին կարգադրում էր մեկ շաբաթվա ընթացքում ցուցակագրվել իրենց բնակավայրերի ոստիկանատներում և կազմ ու պատրաստ լինել՝ նոր հրահանգի դեպքում անմիջապես երկրից հեռանալու համար⁹⁵:

Այդ հրահանգը լրջորեն օգնեց, որ Հյուսիսային Սիրիայի թուրք ազգաբնակչությունը միառժամանակ ձեռնպահ մնա Պոլսի ու Կոնիայի պատվիրակների քարոզչությանը արձագանքելուց և անօրինական քայլերի դիմելուց: Իր հերթին կառավարությունը, խուսափելով թուրքերի արտաքսման հրամանը գործադրելուց, բավարարվեց պետական վարչամեքենան բացահայտ իթթիհատական ճանաչված տարրերից մաքրագործելով: Ավելին, հրապարակվեց հիմնականում թուրքերին վերաբերող լրացուցիչ մի հրահանգ, որը ճշտորոշում էր. «Ընդհանուր ներումը, ինչ ազդէ ալ ըլլա ենթական, հայի և արաբի արյուն թափող և անոնց չարիք հասցնողներուն հետ առնչություն չպիտի ունենա»⁹⁶: Գործադրելով լրացուցիչ հրա-

⁹⁵ «Հայ ձայն», 29.11.1918 թ.:

⁹⁶ «Հայ ձայն», 12.2.1919 թ.:

հանգը և ընդառաջելով հայկական առաջնորդարանի դիմումներին կամ առանձին հայերի ահազանգերին, սիրիական կառավարության Հալեպի ներկայացուցիչները ձերբակալեցին հայկական կոտորածների մի շարք պատասխանատուների (Կեսարիայի ռազմական ատյանի նախագահի տեղակալ Քուլուք Շահաբ, Հալեպի պետական որբանոցի վարիչ Նադըմ և այլք) և պաշտոնազրկեցին հայերի նկատմամբ անարդարություններ գործած բազմաթիվ աստիճանավորների (այդ թվում Հալեպի «Ռեժի» տնօրեն հայատյաց Ադիլին), Հետաքրքրական կլինի նշել, որ հալեպահայ մամուլը ձերբակալությունների և պաշտոնազրկումների շարքը իր ընթերցողներին հաղորդում էր «արաբական արդարություն» խորագիրը կրող մշտական մի սյունակում⁹⁷:

Արաբական կառավարության ներկայացուցիչները չէին անգիտանում նաև, որ թուրքական մեքենայություններից անկախաբար, երկրի հյուսիսում անգլո-ֆրանսիական զորքերի ներկայությունն ու հայ տարագիրների սերտ կապը նրանց հետ՝ կարող էին արաբներին թյուրիմացության մատնող, հետևաբար շրջանի անհանգիստ մթնոլորտը էլ ավելի սրող ազդակներ հանդիսանալու ներանք ստույգ գիտեին, որ անապատաբնակ ցեղախմբերի (հատկապես անազենների) թալանիչ արշավների հետևանքով՝ շրջանում (բացառությամբ գլխավոր քաղաք Հալեպի) փաստական անիշխանություն է տիրում և իրավիճակից առաջին հերթին ու հիմնականում տուժում են հայ գաղթականները⁹⁸:

Ուրեմն զարմանալի չէ բնավ, որ Ֆեյսալ իբն Հուսեյնի ազգականներից էմիր Ալի Նասերը, լիազորվելով որպես Հյուսիսային Սիրիայի արաբական զորքերի ընդհանուր հրամանատար, իր սպայակույտի պետ Ալի Զեդետի ընկերակցությամբ 1918 թ. դեկտեմբերին շտապեց իր նոր պաշտոնատեղին, Հազիվ տեղ հասած, Հալեպում նա ցուցադրաբար հովանավորեց հայ կարոտյալներին ի նպաստ նյութական միջոցների հանգանակման գործը⁹⁹, Մեմբիջում տեղական իշխանություններին կարգադրեց անմիջապես ամբողջ ձմռան համար հացահատիկով ապահովել հայ գաղթականներին¹⁰⁰,

⁹⁷ Տե՛ս «Հայ ձայն» 23.12.1918 թ., 23 և 26.1.1919 թ. և այլ համարներ:

⁹⁸ Անազենների դեպի Ռակկա արշավի և հայերի կրած վնասների մասին տե՛ս՝ «Հայ ձայն», 16.12.1918 թ.:

⁹⁹ «Հայ ձայն», 8 և 10.12.1918 թ.:

¹⁰⁰ «Հայ ձայն», 16.12.1918 թ.:

‘Իեյր էզ-Հորում հրապարակային մի ելույթով դրվատեց հայ-արա-րական պինակցությունը և հուսադրեց տարագիրներին, որ «նոր Հայաստանը իրենց հայր ու մայր» է լինելու, սակայն մինչև հայ-րենիք վերագարձի օրը «արար կառավարությունը նվիրական պարտականություն մը ունի զիրենք խնամելու՝ որպես ողջակեզ ընկեր-ներու բեկորները»¹⁰¹։ Ավելին, հաշվի առնելով որ իր սպայակույ-տի պետ Ալի Զեդետը դեռ պատերազմի սկզբին հայ-արաբական համագործակցությունը ամրապնդելու նպատակով Կահիրեում ստեղծված «Հայ և արաբ եղբայրակցություն» ընկերության հիմ-նադիրներից մեկն էր եղել Մուշեղ եպս. Սերոբյանի և Առաքել Նու-պարի հետ¹⁰², էմիր Նասերը նրան թողեց Հալեպում՝ որպես քա-ղարի արաբական կայազորի հրամանատար¹⁰³։

Երկրի հյուսիսում տիրող իրավիճակի լրջությամբ և Ֆեյսալի կարդադրությունների խստությամբ պետք է բացատրել այն հանգա-մանքը, որ «օկուպացված արևելյան երկրամասի» ընդհանուր կա-ռավարիչ Ալի Ռիզա ալ-Ռիկաբին 1918 թ. վերջերին և 1919 թ. սկզբներին հարկադրվում էր տասը օրը մեկ տեսչական այցի գնալ Հալեպ և այլ հարցերի շարքին քննարկել նաև հայ գաղթականների դրությունը։ 1918 թ. դեկտեմբերի 20—21-ին Ալի Ռիզան հանդի-պումներ ունեցավ հայ գաղթօջախի առաջնորդների հետ և հավաս-տեց նրանց, որ արաբ ժողովուրդը, ինչպես պատերազմի տարի-ներին, այնպես էլ այժմ իր բազմակողմանի աջակցությունը պի-տի չվանա «տառապանքի օրերու բախտակից» հայ ժողովուրդին¹⁰⁴։ 1919 թ. հունվարի սկզբներին նա նորից հանդիպեց հալեպահայ գործիչների հետ և ընդգծեց. «Մենք, արաբներս, հայերը կընդու-նինք իբրև թուրք անիրավություններն ընկճված ու ծալրահեղո-րեն հարստահարված ազգ մը և մեզի պարտականություն կնկա-տենք ամեն աջակցություն, ամեն գուրգուրանք և ամեն քաջալե-րություն ցուցնել անոնց»¹⁰⁵։ Ալի Ռիզան այդ առիթով հայերին, որպես «լուսավորյալ ազգի ներկայացուցիչներին», թելադրեց եռանդ լինայել և իրենց արաբ հյուրընկալների մշակութային վերելքին սատարել, քանի որ այդպիսի համագործակցությունն է, որ անկաս-

¹⁰¹ Սաճակ Մեսրոպ, Տեր Զորի հայերը, «Հայ ձայն», 31.12.1918 թ.։

¹⁰² «Հայ ձայն», 15.2.1919 թ.։

¹⁰³ «Հայ ձայն», 12.1.1919 թ.։

¹⁰⁴ «Հայ ձայն», 23 և 24.12.1918 թ.։

¹⁰⁵ «Հայ ձայն», 10.1.1919 թ.։

կած ավելի ամուր հիմքերի վրա կոնի հայ-արաբական բարեկամությունը¹⁰⁶։

Բուն իսկ Հալեպ քաղաքում, սակայն, հայ-արաբական փոխհարաբերությունների բարելավման գործին արդեն իսկ աշալուրջ հետևում էր շրջանի զինվորական ընդհանուր կառավարիչ Շուքրի ալ-Այուբին, որ տարբեր առիթներով չէր վարանել հայերին հասցեագրելու «մեծ և ազնիվ, վեհանձն ու տոկուն ժողովուրդ» գնահատականը¹⁰⁷։ Նա պաշտոնի նշանակվելուց անմիջապես հետո կարգադրեց հետապնդումներ ձեռնարկել քաղաքում թաքնվող թուրք հայասպանների դեմ և հայերին վերադարձնել Զեմալի ներկայացուցիչների կողմից բռնագրավված և արաբական իշխանությունների ձեռքն անցած գումարները։

Հալեպահայ տարեգրության հիշարժան էջերից մեկը անկասկած վերաբերում է 1919 թ. հունվարի 20-ին, երբ 50 000 հայ տարագիրներ սգացին եղեռնի զոհ իրենց հարազատների կորուստը։ Հազարավոր հայերի օղակի մեջ առնված հայկական եկեղեցում սգահանդեսին իր մասնակցությունը բերեց քաղաքի ամբողջ ավագանին, Շուքրի ալ-Այուբին, իշխան Նասերի, զորահրամանատար Զեդետի և ոստիկանապետ Զիադի գլխավորությամբ, իսկ «ալ-Թակադդում» մեծազդեցիկ օրաթերթի խմբագրապետ Շուքրի Ռզազլա Կնեյդերը հանում Սիրիայի բոլոր արաբների բեմից ձաղկեց թուրքական խժոժությունները¹⁰⁸։

Հայ-արաբական փոխհարաբերությունների այս աստիճանի բարվոք պայմաններում էր, որ թուրքական գործակալությունների կողմից կազմակերպվեցին և իրականացվեցին Հալեպի 1919 թ. փետրվարի 28-ի հակահայ բռնությունները։ Այդ բռնությունները, որոնք արևմտյան մայրաքաղաքներում հասկանալիորեն օգտագործվեցին արաբ ժողովուրդների՝ «անկախության համար թերահաս» լինելու մասին աղմկողների կողմից, բնականաբար չէին կարող արթնամտության չմղել սիրիական ազգային շարժման ղեկավարներին և առաջին հերթին Ֆեյսալ իբն Հուսեյնին։

Այդ և ընդհանրապես հայ-արաբական փոխհարաբերությունների հետաքրքիր մի էջը դրվագելու տեսակետից ուշագրավ է 1919 թ. մայիսի 9-ին (ըստ այլ աղբյուրների՝ մայիսի 14-ին) Դա-

¹⁰⁶ Նույն տեղում։

¹⁰⁷ «Հայ ձայն», 19.11.1918 թ. և 30.12.1918 թ.։

¹⁰⁸ «Հայ ձայն», 24.1.1919 թ.։

մասկոսի քաղաքապետարանի դահլիճում Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի և Անդրհորդանանի պատվիրակների հավաքույթը, որի ընթացքում սիրիական անկախության ֆեյսալյան ժրագիրը որոշ իմաստով հանրաքվեի էր դրվելու:

Արաբ և աղդային-փոքրամասնական պատվիրակների առաջ իր ելույթի սկզբում Ֆեյսալը առաջին հերթին կանգ առավ «երկրում երբեմնակի տեղի ունեցող խառնակությունների վրա», ընդգրծելու համար, որ եվրոպական մայրաքաղաքներում, անգիտանալով որ «Սիրիայի բոլոր խառնակությունների սկզբնապատճառը թուրքերն են, մեղքը բարդում են արաբների վրին»¹⁰⁹: Այնուհետև պարզարանելուց հետո իր քաղաքական-կառավարական ժրագիրը, Ֆեյսալը խոսքը սիրիացի արաբներին հասցեագրելով այսպես եզրափակեց իր ելույթը. «Ազգի որդիներ... պարտավոր ենք ցույց տալ դաշնակիցներին, որ մենք իր անկախությանը ձգտող կորովալիր մի ազգ ենք: Ցույց տվեք նրանց, որ մենք պաշտպանում ենք մեր մերձավորներին և զաղթականներին, օգնում ենք ժերերին և երիտասարդներին, որ մենք հարգում ենք նրանց՝ ովքեր գալիս են մեր պապենական հարազատ այս հողում մեզ համար աշխատելու: Ես հատկապես դա եմ խնդրում ձեզանից, քանի որ այդ է այն միակ հիմնաքարը, որի վրա կարող ենք կառուցել մեր ապագա ձեռնարկումը... Ես ասում եմ ձեզ, որ դուք անկախություն ձեռք չեք բերի այնքան ժամանակ, քանի դեռ անդորրությունը չի պահպանվի և ճշգրտորեն չի կատարվի այն, ինչ ասացի ես ձեզ»¹¹⁰:

Տարբեր բնակավայրերից ժամանած իսլամ արաբ պատվիրակների հետ Դամասկոսի այդ հավաքույթում ելույթ ունեցան և երկրի անկախության ոգորումներին իրենց միասնությունը հավաստեցին նաև ազգային փոքրամասնությունների՝ դրուզների, չերքեսների, հրեաների, հույների, ասորիների և մյուսների ներկայացուցիչները: Ելույթ ունեցավ նաև Սիրիայի հայ զաղթականության ներկայացուցիչը՝ Դամասկոսի հայ եպիսկոպոսը:

Կարևորությունից զուրկ չի լինի նշել, որ հավաքույթի մասին Լոնդոն ուղարկված իր գաղտնի զեկուցագրում Դամասկոսի բրիտանական դիտորդներից կապիտան Հանթերը, Ֆեյսալի ճառի ընդմիջարկմամբ կատարված բոլոր ելույթների հիմնական միտքը մի քանի տողով և չակերտների մեջ տալուց հետո, վերջին ելույթ

¹⁰⁹ „Documents on British Foreign Policy, 1919—1939“ First ser., vol. IV, pp. 267—268.

¹¹⁰ Նույն տեղում, էջ 271:

ունեցողի՝ հայ եպիսկոպոսի ճառի շարադրանքը ներկայացրել է այսպես. «Ապա... ելույթ ունեցավ հայ գաղթականների եպիսկոպոսը՝ շնորհակալութիւն հայտնեց արաբներին պատերազմի շուրս տարիների ընթացքում հայ տարագիրներին ցույց տրված բարի վերաբերմունքի համար, և ասաց, որ իրենց պատմութեան մեջ արաբների անունը ոսկյա տառերով գրված պիտի մնա և ուրեմն շնորհակալութիւն եմ հայտնում և շնորհավորում եմ Զեզ»¹¹¹:

Հայ եպիսկոպոսի վերջին խոսքերը բրիտանական դիտորդը իր գեկուցագրում ընդգծել է ակներև քմծիծաղով: Այդ բառերը, սակայն, որոշակի իմաստ կստանան այն դեպքում, երբ հայոց պատվիրակի վերջին ելույթ ունենալը վերագրենք ոչ թե Սիրիայում ազգային փոքրամասնութիւնների շարքում հայերին տրվող վերջին տեղին, այլ, ընդհակառակն, տվյալ հավաքութեամբ սիրիական ազգային շարժման ղեկավարներին զբաղեցնող կենտրոնական հարցերից մեկում նրանց գրաված առաջնային տեղին, այն իմաստով, որ թուրքերի կողմից կազմակերպվող և իրագործվող «սիրիական խառնակութիւնների» հիմնական զոհերի՝ հայ գաղթականների ներկայացուցչի իսկ բերանով հերքվում էին գաղութարարների հակաարաբական հերյուրանքները, և որ այդ հերյուրանքների հիմնական պատրվակի՝ «անկախութեան համար թերահաս սիրիացիներից կոտորվող» հայ ազգաբնակչութեան պատվիրակի իսկ շնորհավորական խոսքերով ամփոփվում էր Սիրիայի անկախութեան օգտին համընդհանուր դիրքորոշումը:

Հալեպի եղբրական դեպքերի լույսի ներքո հայ-արաբական փոխհարաբերութիւնների հարցը հանգամանալից քննարկման ենթարկվեց հատկապես Հալեպում, 1919 թ. հունիսի 2-ին, երբ օգտրվելով դեպի Հյուսիսային Սիրիա իր երկրորդ շրջապատույտից, Ֆեյսալ իրեն Հուսեյնը անհրաժեշտ համարեց Հալեպի նոր նահանգապետ Ջաաֆար ալ-Ասկարիի ընկերակցութեամբ այցելել հայերի առաջնորդարանը և հանդիպում ունենալ «Հայ ազգային միութեան» ղեկավարների հետ: Զրույցի հիմնական թեման թուրքական գործակալութիւնների հետագա գրգռութիւնների կանխարգելման միջոցառումներն էին, քանի որ նրանց ջանքերով էր, որ «անմեղ հայերու արյունը ժայթքեց արաբական մաքուր դրոշի վրա»¹¹²:

¹¹¹ Նույն տեղում:

¹¹² «Եփեսոս», 27.6.1919 թ.:

Որպես Ֆեյսալի և հալեպահայության ղեկավարների խորհրդակցության արդյունք, տեղի արար և հայ գործիչները համոզվեցին փոխադարձ մերձեցումն ու կապը օրըստօրե սերտացնելու, բոլոր տեսակի դավերի ու մեքենայությունների դեմ միասնական ճակատ հարդարելու անհրաժեշտության հարցում: Արդարև, հյուսիսային Սիրիայի ռզիմիտրական կուսակալին և մյուսքիսին սկսյալ կառավարության վերին պաշտոնյաները հանրության աչքին երեւալու ձևով մը սկսան հայոց առաջնորդարանը այցելել և պարբերաբար զիրար հյուրասիրել», — վկայում է մի ժամանակագիր¹¹³: Այդ շփումներից է, որ ծնվեցին երկու ժողովուրդների նոր կապերի պատմության առաջին ուշագրավ երևույթը հանդիսացող «Հայ և արաբ ժողովուրդների բարեկամության կոմիտեները», որոնց հիմնական առաջադրանքը եղավ խափանել թյուրիմացություններ հրահրելու փորձերը՝ «ի դերև հանել թրքական արյունոտ մեքենայությունները» և «գործուն պրոպագանդայով մը հայ-արաբ դավադր բարեկամությունը ամրապնդել»¹¹⁴:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Սիրիայում հայ-արաբական փոխհարաբերությունների պատկերը ամբողջացնելու համար անհրաժեշտ է խոսել նաև այն դերի մասին, որ Ֆեյսալ իրն Հուսեյնը ունեցավ բազմահազար հայ կանանց և երեխաների փրկության գործում:

Հայտնի է, որ տեղահանության տարիներին, արաբ որոշ քաղաքաբնակներ և հատկապես սիրիական անապատի քոչվոր բեդվիները՝ անագենները և շամմարները, ձեռնպահ մնալով հայերին կոտորելուց, թուրքական յաթաղանից փրկել, ապա և որդեգրել ու արաբացրել էին տասնյակ հազարավոր հայ մանուկների¹¹⁵: 1918 թ. հունվարի 15-ին Բասրայից Փարիզ ուղարկված պաշտոնական մի տեղեկագիր հաստատում է, որ «բոլոր քրիստոնյաները, որոնք ապաստան են խնդրում... բենի իլամ և շամմար ցեղերից, սիրահոժար ընդունվում են և պաշտպանություն գտնում թուրքերի

¹¹³ «Արեւ», 4.4.1924 թ.:

¹¹⁴ Նույն տեղում: Նաև՝ «Եփրատ», 10.5.1930 թ.:

¹¹⁵ Ե. Օտյանը 1918 թ. նոյեմբերին աքսորից վերադառնալով, Պոլսում հավաստում էր (տե՛ս «Ժողովուրդ», 21.11.1918), որ արաբ վրանաբնակների տիրույթներն ընկնելու բախտն ունեցած մտավորականները (անձամբ ինքը, Լ. Մոզյանը, Սահակ Մեսրոպը, Արամ Անտոնյանը, Գր. Անգուսթը, և ուրիշներ) ոչ մի բռնության չեն ենթարկվել և պարզապես առ ի զգուշություն խլամացել են: Արաբացած Օտյանը դարձել էր... Ազիզ Նուրի:

դեմ, որոնք չեն իսկ համարձակվում նրանց պահանջելու»¹¹⁶։ Քաղ-
դեացի մի եպիսկոպոս, որ իբր շեյխ ծպտվելով սիրիական անա-
պատի վրանաբնակների մոտ ստուգայց է կատարել, իր տեղեկա-
գրերից մեկում գրում է. «Տեղեկատուն շամար ցեղախմբի մոտ
բնակվելիս նկատեց ներկայությունը մեծ թվով հալ կանանց և
երեխաների... նա նույնպես իմացավ, որ շամար ցեղի մարդկանց
մոտ ծառայության են վերցվել մոտ 2000 հայեր։ Երեխաները
թլպատված են և կրում են մահմեդական անուններ, իսկ կանայք
վաճառվում են շրջանի գլխավոր ցեղապետերին»¹¹⁷։

Եթե նկատի ունենանք, որ կապիտալիզմի զարգացումից խիստ
տուժած (հիշենք թեկուզ ավտոմոբիլային տրանսպորտից բարա-
վանային առևտրին հասցված հարվածը) արաբ ցեղախմբերը լուրջ
հարված կրեցին նաև առաջին աշխարհամարտի տարիներին (հատ-
կապես քոչի դժվարության և բռնագրավումների հետևանքով ոչ-
խարսների և ուղտերի գլխաքանակի աղետալի անկումը), դժվար
չի լինի պատկերացնել, թե երկնառաք ինչպիսի գանձ էին հանդի-
սանում. որդեգրվող հայերի աշխատասեր և շնորհալի ձեռքերը։

Եվ ահա զինադադարից անմիջապես հետո հայերի և հայասեր
օտարների կողմից եռանդագին աշխատանք էր ձեռնարկվում՝ ա-
նապատի վրանաբնակներից վերցնելու նրանց հալ «կանանց» ու
«որդեգիրներին»¹¹⁸, ինչ որ չէր կարող չբորբոքել միջնադարյան
խավարում տվյալ տող անազենների և շամարների մոտ հակահայ
կրքերը։ Անապատաբնակներին առավել զայրացնում էր այն փաս-
տը, որ հայերի պահանջով¹¹⁹ գործին միջամտում էին անգլիական
և ֆրանսիական զինված ուժերը և բռնությամբ խլում էին նույնիսկ
«նիքյահ»-ով (պաշտոնական-կրոնական ամուսնությամբ) արաբ-
ների հետ պսակված և երեխաներ ունեցած կանանց։ Հենց այս
խրողովյամբ պետք է բացատրել այն հանգամանքը, որ թուրքա-
կան գործակալությունների հակահայ գրգռությունները որոշակի
արձագանք գտան բեղվիներին մոտ, որոնք թուրք «մուջահիդներին»

¹¹⁶ «La Voix de l'Arménie», 1^{re} année No. 7, 1. 4. 1918, pp. 237—238.

¹¹⁷ Նույն տեղում, Ա. տարի, № 10, 15.5.1918, էջ 356—357։

¹¹⁸ Ա. Սյուրմեյան, Պատմություն Հայկաի հայոց, 2. Ա., «Սուրիա», Հայկա.
1940, էջ 501—507։

¹¹⁹ Տե՛ս Ե. Օալան, Անհետաձգելի խնդիր մը, «Ժողովուրդ», 8.12.1918 թ.,
Նաև՝ «Հայ ձայն», 6.12.1918 թ.։ «La Voix de l'Arménie», 2^e année No. 25—
26, I et 15. I. 1919, pp. 49—50.

հետ թափանցեցին Հալեպ և մասնակցեցին փետրվարի 28-ի խըժ-դրժություններին:

Հալտնի չէ, թե հարցի լուծումը ինչպիսի ընթացք կստանար, և թե գործին չմիջամտին Հիշադի գահակալ Հուսեյն իրն Ալին և հատկապես Ֆեյսալ իրն Հուսեյնը: Առաջինը, ընդառաջելով Պողոս Նուպար փաշայի դիմումին, դեռ 1918 թ. հունվար և փետրվար ամիսներին արքայական հրովարտակներով Մաանի և Ակաբայի կառավարչություններին կարգադրել էր հայերին հանձնել ռմբժ իոթթր, ամուսնացած և ամուրի աղջիկներն ու մանչերը¹²⁰: Ֆեյսալը, որ դեռ 1919 թ. տարեսկզբին ձխիստ հրահանգներ էր տվել, որ-պեսզի իրենց հարազատներին վերադարձվեն բոլոր հայուհիները՝ «նույնիսկ եթե ամուսնացած ըլլան»¹²¹, Փարիզում Պողոս Նուպարի հետ իր տեսակցությունից հետո հեռագրով կարգադրում էր ալ-Ռիկաբիին պարզել, թե «ո՞ր արաբներուն և աշիրեթներուն քով հայ կիներ կամ աղջիկներ և կամ որբեր կգտնվին», որպեսզի «շու-տով այդ հայերը առնվելով արաբներու քովեն՝ հանձնվին հայերու կազմած ազգային ներկայացուցչական մարմնին»¹²²: Եվրոպական ուղերթից վերադարձին նա Դամասկոսի զինվորական կառավարչին հրամայում էր խստագույն ազդարարություն և պատիժների սպառնալիքով արաբներից պահանջել, որ իրենց բնակավայրի ոս-տիկանատներին հաղորդեն իրենց մոտ պահվող հայերի մասին, «նկատելով որ որոշված է մոտ օրեն իրենց հայրենիքը վերադարձ-նել հայերը»¹²³: Հունիսի 2-ին, Հալեպի հայ գաղթականության առաջնորդների խնդրանքին ընդառաջելով, Ֆեյսալը զինվորական կառավարիչ Զաաֆար ալ-Ասկարիին կարգադրում էր ոչ միայն խստագույն պատիժների ենթարկել հայ կանանց և երեխաներին չվերադարձնողներին, այլև հայերի ցուցումով բռնի ուժով վերցնել բոլոր իսլամացվածներին, նույնիսկ «նիքյահով» ամուսնացածնե-րին: Վերջիններս 15 օրից մինչև մեկ ամիս պետք է պահվեն «չեզոք» կազմակերպությունների (օրինակ՝ կարմիր խաչի ընկերու-թյան) մոտ և այնուհետև հայտնեն, թե ցանկանո՞ւմ են արդյոք վերադառնալ հայության գիրկը¹²⁴:

¹²⁰ «Կիլիկիա», 27.6.1919 թ.:

¹²¹ «Հայ ձայն», 2.2.1919 թ.:

¹²² «Ժողովուրդի ձայն», 22.1.1919 թ.:

¹²³ «Կիլիկիա», 23.5.1919 թ.:

¹²⁴ Նույն տեղում, 27.6.1919 թ. և 8.7.1919 թ.:

1919 թ. հունիսի վերջերին Հալեպից հայտնում էին, որ տեղի հայ կյանքում «աչքառու պարագա» էր արդեն «շրջակա արաբներու և քրդերու քովին հավաքված հայ աղջիկներու և մանչերու վերադարձը»¹²⁵, ինչ որ ավելի ուշագրավ է, Ֆեյսալի թույլտվությամբ, հայ համայնքի անդորրությունն ու անվտանգությունը պահպանելու նպատակով, սկսում էին Հալեպում համախմբվել հայկական լեգեոնի կամավորները, որոնք ֆրանսիական գաղութարարների կողմից Կիլիկիայում «անհուսալի» և հետևաբար «անցանկալի» էին հայտարարված...¹²⁶

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո, երբ արաբական երկրներում սկսվեց հայ նոր և ըստվար գաղթախնների հիմնավորումը, հայ-արաբական փոխհարաբերությունները Սիրիայում զարգացման հունի մեջ մտան ոչ առանց լուրջ խոչընդոտների: Այդ խոչընդոտները, ինչպես ցույց տվեցինք, հիմնականում անգլո-ֆրանսիական գաղութարարների և թուրքական գործակալների նենգամիտ մեքենայությունների արդյունքն էին պարզապես: Արաբ ու հայ գործիչների և ժողովրդական զանգվածների արթնամտությունը, սակայն, կարողացավ ձախողեցնել ինչպես Սիրիայի, այնպես էլ հայ ժողովրդի տարագիր բեկորների համար չարաբաստիկ այդ մեքենայությունները և հայ-արաբական բարեկամությունը դնել ավելի ամուր հիմքերի վրա:

Е. О. НАДЖАРЯН

АРМЯНО-АРАБСКИЕ ВЗАИМООТНОШЕНИЯ В СИРИИ (октябрь 1918—июнь 1919 гг.)

Р е з ю м е

В статье рассматриваются армяно-арабские взаимоотношения в Сирии в конце первой мировой войны до созыва Главного сирийского конгресса. Начало образования новой армянской колонии в Сирии примечательно тем, что установлению дружественных отношений между арабами и армянами серьезно мешали не только английские и французские колонизаторы, но и, в частности, турецкая агентура. Последняя имела задачу спровоцировать армянскую резню в Сирии, получая при этом инструкции от Кемаля и его сообщников.

¹²⁵ Նույն տեղում, 28.6.1919 թ.:

¹²⁶ Նույն տեղում:

Из описанных событий наибольший интерес представляют насилие и преследование армян, спровоцированные на севере Сирии 28 февраля 1919 г. Почти всеми исследователями эти события представлены как эксцессы, совершенные руками арабов при подстрекательстве колонизаторов. На основании архивных материалов, а также материалов прессы того времени и воспоминаний современников, автор показывает, что эти эксцессы представляют собой одно из звеньев в общей цепи антиармянского заговора, организованного кемалистами в Киликии.

В статье подчеркивается, что благодаря усилиям арабских и армянских прогрессивных деятелей антиармянские события в Алеппо не повлияли на дружественные связи арабов и армян, которые в дальнейшем укрепились на основе общей антиимпериалистической борьбы.

يغيا هـ. نجاريان

العلاقات المتبادلة بين الارمن والعرب في سوريا

من اكتوبر ١٩١٨ حتى يونيو ١٩١٩

(ملخص)

يصور المقال العلاقات المتبادلة بين الارمن والعرب في سوريا من نهاية الحرب العالمية الاولى حتى انعقاد المؤتمر السوري العام. بمتاز الطور الاول من تكوين الجالية الارمنية السورية الضخمة في ان روابط الصداقة الارمنية - العربية قد شكلت عائقا كبيرا ليس فقط للمستعمرين الانكليز والفرنسيين، وانما وبصورة خاصة، للمخادبات التركية، والعملاء الذين، بهدف تنظيم المذابح الارمنية، كانوا يستمرون في تلقى التوجيهات من مصطفى كمال ومثليه في الفترة التي نبحثها.

من اهم الاحداث المصورة، اعمال العنف التي اتتبع بحق الارمن في شمالي سوريا يوم ٢٨ فبراير ١٩١٩. تلك الاعمال التي اعتبرها الباحثون، حتى اليوم، انها تمت بايدي العرب و بدفع من الاستعماريين. اما الكاتب، فقد اثبت، استنادا على مواد الارشيف و دوريات و مذكرات معاصري الاحداث، اثبت ان اعمال العنف ليست الا حلقة من المؤامرة التي دبرها الكماليون ضد الارمن في كيليكييا.

يؤكد كاتب المقال ان اعمال العنف التي وقعت في حلب لم تؤثر على روابط الصداقة الارمنية - العربية، بل و وضعتها، بالتدريج، على أسس اكثر متانة بفضل جهود قادة الارمن والعرب.